Բացի այն, որ դա քաղաքական հետապնդումների հրահանգ է եւ ուղղակի ապացույց, իրավախախտում է, որը հնարավոր է ազդեցություն ունենա ընտրությունների արդյունքների վրա, հասնում են այն կետին, որ ասում են՝ ով որ ընտրի այս ուժին, մենք իրենց կհամարենք գործակալներ, սա ուղղակի ազդեցություն է ընտրողների կամքի վրա:

Կարդացեք՝ էջ 4

Թաղապետի կամ գյուղապետի ավտոն առավոտից իրիկուն շտաբի առաջ ցցված է: Գնում ես թաղապետարան՝ թաղապետը տեղում չէ, մարզպետարան՝ մարզպետը տեղում չէ, նախարարություն՝ նախարարը տեղում չէ, հարցնում ես՝ բա ո՞ր ջանդամն են, ասում են՝ գնացին շտաբ: Խելքի աշեցեք: Մարդիկ պետությունը թողել՝ ՔՊ-ի շտաբ են գնացել:

Կարդացեք՝ էջ 5

Ընտրությունը Հայաստանի ներկա իշխանությունների, որոնք երկիրը տանում են դեպի ԵՄ եւ ԵԱՏՄ-ի հետ խզում, եւ այն ուժերի միջեւ է, որոնք կողմ են Հայաստանի ԵԱՏՄ անդամակցությանը: 1 շաբաթ հետո՝ մայիսի 29-ին, ԵԱՏՄ խորհրդի նիստում ՌԴ նախագահը կտա ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը սառեցնելու պրոցեսի մեկնարկը:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 82 (4217), 22 մայիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

ՔՊ-ական մարզպետները, որոնք իշխող ուժի մարզային շտաբների ղեկավարներն են, այս օրերին առանձնակի լարվածությամբ են իրենց մարզերում սպասում նյարդային վիճակում գտնվող Նիկոլ Փաշինյանին: Իսկ նրանք, ովքեր արդեն հյուրընկալել են, եւ հիստերիայի մեջ գտնվող շեֆը գոհ չի մնացել, որովհետեւ հանդիպումները մարդաշատ չեն անցել, տագնապային սպասումներ ունեն, թե ինչպես է որոշվելու իրենց ճակատագիրը: Այն մարզերում, որտեղ Փաշինյանը տհաճ պահեր է ունեցել, եւ մարդիկ նրան դավաճանության կամ այլ բանում են մեղադրել, մարզպետներն իրենց պաշտոնանկությանն են սպասում, եթե ՔՊ-ն հունիսի 7-ին վերարտադրվի: Այս պահի դրությամբ Սյունիքը կարծես միակ մարզն է, որտեղ տհաճ միջադեպեր չեն գրանցվել, ինչից ոգեւորված՝ կալավանցի մարզպետը՝ Ռոբերտ Ղուկասյանը, բանուգործը թողած, ողջ օրը օգնականների ու խորհրդականների հետ դռնեդուռ ընկած, ՔՊ-ի համար քվեներ է մուրում: ՔՊ համայնքային շտաբների պատասխանատուներն էլ, ՔՊ-ի շապիկները հագած, ողջ օրը բուկլետ են բաժանում: Անգամ վարչության կողմից մերժված, ՔՊ ցուցակից վտարված ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանն է միայնակ իր քարոզարշավն անում՝ Կապանի գյուղերում, քանի որ բոլորին զգուշացրել են՝ որտեղ բարձր տոկոսներ խփեն, այդ մարզի ՔՊ-ականները «խերի մեջ կկորեն»:



Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքն այն համայնքներից է, որտեղ ՔՊ-ն շատ ցածր ռեյտինգ ունի եւ ամենաքիչ ձայներն է տանելու: Այստեղ շատ ակտիվ աշխատում են ԲՀԿ-ի, ԱԺԲ-ի աջակիցները: Դա է պատճառը, որ ՔՊ-ի ծանր հրետանի Կոտայքի մարզպետը՝ իր թիմով, Սասուն Միքայելյանը՝ իր շքախմբով, շարունակ Չարենցավանում են՝ հուսով, որ ինչ-որ բան կփոխեն քաղաքում: ՔՊ-ի համար են աշխատում բոլոր դպրոցների տնօրենները, որոնք մարզպետարանի ենթակայության տակ են: Չարենցավանի ԲԿ-ի տնօրեն Գառնիկ Սահակյանը, որն ավագանու ՔՊ խմբակցության անդամ է եւ Հովիկ Աբրահամյանի մորաքրոջ որդին, նախկինում ՀՀԿ-ի համար է աշխատել, այժմ՝ ՔՊ-ի: Նրա կինը՝ Լուսինե Ազարյանը, որը Չարենցավանի «Ծիծեռնակ» մանկապարտեզի տնօրենն է, «Հրաշք» մանկապարտեզի տնօրեն Կարինե Խեդոյանը՝ Գեղարքունիքի մարզի դատախազ Գագիկ Այվազյանի մայրը, «Հեքիաթ» մանկապարտեզի տնօրեն Էլմիրա Հակոբյանը՝ ՔՊ-ի աջակից Սերգեյ Միրզախանյանի կինը, գիշերուզօր աշխատում են ՔՊ-ի համար:

Սելն ու սելվորը

Հենց այսպես է ստացվում, երբ փոխանակ հասարակությունը պահանջատեր լինի, հասարակությունից պահանջներ է ներկայացնում իշխանությունը: Փոխանակ մենք հարցնենք՝ ինչո՞ւ չզոհվեցիք պատերազմում, ձեր մերձավորներից ոչ մեկը չզոհվեց, այլ այն փայլուն երիտասարդները, որոնց զոհվելն անհաղթահարելի ողբերգություն դարձավ իրենց ընտանիքների համար, եւ որոնց մայրերն են արդեն մահանում՝ որդիների կորուստը չհաղթահարելով: Այս ցինիկ ու անամոթ իշխանավորներն իրենք են նման հարց ուղղում իրենց մահաբեր իշխանության 8 տարիների ընթացքում ողջ մնացած մարդկանց: Սելը ճռռալու փոխարեն սելվորն է ճռռում՝ ասում է հայկական ասացվածքը, նկարագրելով այս վիճակը: Փոխանակ հասարակությունը պահանջեր եւ հասներ նրան, որ պատերազմում պարտված, բանակցությունները տանուլ տված, Արցախը հանձնած եւ ՀՀ բուն տարածքն անգամ չպաշտպանած այս ազգակործանների խմբակը հեռացված լիներ, հրաժարական տար ու չվերընտրվեր, դեռ նրանք են լկտի հանդիմանություններ ուղղում իրենց իշխանության ժամանակ հրաշքով վերապրած մարդկանց: Շատ ավելի լկտի ու ցինիկ հարցեր են ուղղելու հետո, եթե ինչ-որ հրաշքով այս համատարած տեռորի, ագրեսիվ խոսույթի ու վարչական ռեսուրսները չարաշահելու արդյունքում վերարտադրվեն: Արդեն ոչ թե հարց են ուղղելու, թե «ինչու եք կենդանի մնացել», «կենդանի մնացածների» խմբերին դատելու են ու պատժեն: Հանձնելու են թշնամուն եւ հանգիստ դիտեն, թե ինչպես են Բաքվի բանտերում խոշտանգվող 19 հոգուն եւս 19 կամ 109 մարդ ավելանում: Դռները բացելու են թշնամական երկրի քաղաքացիների առաջ, որոնք մեծ արտոնություններ են ունենալու մեր երկրում, եւ որոնց հանցանքները, վստահ եղեք՝ չեն պատժվելու: Եվ դա լինելու է իրական ապոկալիպսիսը, որից խուսափելու միակ ուղին մնալու է արտագաղթը:

2025 թվականին Վարդենիսում, Սամվել Կարապետյանի աջակցությամբ, բացվել է «Հայուհի» կանանց կենտրոն, որտեղ շուրջ մեկ տարի է՝ կանանց համար անվճար դասընթացներ են կազմակերպվում՝ հրուշակագործության, դերձակության, վարսահարդարության եւ այլն: Այդ դասընթացներին հատկապես մասնակցում են արցախցի կանայք, ովքեր ունեն աշխատանք գտնելու խնդիր: Բայց նախընտրական փուլում կենտրոնը հայտնվել է ԱԱԾ-ի տեսադաշտում: Պարզվում է՝ կենտրոնի տնօրենը սատարում է «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը: Անվճար դասընթացներին մասնակցող կանանց վերջերս հրավիրել են Ազգային անվտանգության ծառայություն, ասել են՝ Սամվել Կարապետյանի՝ ձեզ համար կազմակերպած այդ դասընթացներն ընտրակաշառք են: Կանայք պատասխանել են, որ դասընթացները եղել են ամիսներ առաջ, գործել են 2025 թվականին եւ ընտրությունների հետ որեւէ կապ չունեն: Մեր աղբյուրն ասաց, որ ԱԱԾ-ն փորձում է սա էլ ներկայացնել որպես ընտրակաշառք, գործ հարուցել, վախեցնել մարդկանց: Իսկ Աննա Հակոբյանի «Իմ քայլը» հիմնադրամի գործունեությունը «չի նկատում» ոչ ԱԱԾ-ն, ոչ Հակակոռուպցիոն կոմիտեն:

ՆՈՐԻՑ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆ ԿԱՆՉՈՒՄ

Իրավապահ համակարգի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ վերջին շաբաթներին 44-օրյա պատերազմի վերաբերյալ հարուցված քրեական վարույթին նոր շունչ են հաղորդել: Հարցաքննության են կանչում միջին օղակի զինվորականների, հիմնականում՝ յուրայինների, որպեսզի բարձրաստիճան զինվորականների, պատերազմի ժամանակ պատասխանատու պաշտոնյաների, հիմնականում՝ Գլխավոր շտաբի ներկայացուցիչների դեմ ցուցմունքներ կորզեն: Մեր աղբյուրները չեն բացառում, որ ընտրություններին ընդառաջ սա ընդամենը պրոֆիլակտիկ, վախեցնելու համար իրականացվող օպերացիա է, որով զինվորականությանը հասկացնում են՝ չմտածեն խաղեր տալ: Սակայն չեն բացառում նաեւ ձերբակալությունները, որով կփորձեն ավելի տպավորիչ դարձնել վախի մթնոլորտը՝ ընդդիմության հետ «խաղեր տվողների» նկատմամբ: Ի դեպ, ասում են՝ ԳՇ նախկին պետ, վերջերս ակտիվության նշաններ դրսեւորած Օնիկ Գասպարյանն այս պատճառով է ընդհատակ անցել, նրան էլ են հասկացրել, որ տեղը հանգիստ նստի, հակառակ դեպքում «լավ չի լինի»:

ԵԹԵ ՀԻՄԱ ԱՅՆՊԵՍ ԽՈՍԵՄ, ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ ԷԻ ԽՈՍՈՒՄ, ԻՆՁ ՀԱՍՏԱՏ ԿՏԱՆԵՆ ԿԱԼԱՆԱՎԱՅՐ

*Հարցազրույց «Բոլորին դեմ եմ» ցուցակի հինգերորդ համարը զբաղեցնող **Միքայել Նահապետյանի** հետ*

- Թվում է՝ ընդդիմադիր ուժերը պետք է շեշտադրումներ անեն այս իշխանությունների սխալների, վատ խոսույթի վրա, որ հանրության գիտակցության մեջ մեխվեն դրանք, ինչպես մեխվել են Մարտի 1-ի, Հոկտեմբերի 27-ի մասին թեզերը, սակայն նախկին քաղհասարակությունը լռում է, ընդդիմությունն էլ լավ չի օգտագործում Փաշինյանի՝ իրեն մատուցած «նվերները», լավագույն դեպքում՝ մեկ-երկու հայտարարություն, գրառում, եւ վերջ: Օրինակ, մի քանի օր առաջ մի քաղաքացու՝ ՔՊ-ի պաստառը պոկելու համար, հոգեբուժարան տարան, որտեղ նա ինքնասպան եղավ, եւ մոռացվեց, որ Փաշինյանի պաստառը մարդու մահվան պատճառ դարձավ: Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ նման կարեւոր հարցերը տեղ չեն գտնում ընդդիմության օրակարգում:

- Կարելի է 2 դիտարկում անել. նախ, պետք է ասել, որ նախընտրական շրջանն այս իմաստով վատագույն շրջանն է՝ օրակարգեր մշակելու համար, քանի որ բոլորն ունեն ինչ-որ ստրատեգիաներ եւ պարզապես ժամանակ չունեն գնալ, արձագանքել, հետամուտ լինել նման պրոցեսներին: Իսկ մյուս դիտարկումն էլ այն է, որ այստեղ կան արժեքային խնդիրներ: Ես մեծ կասկածներ ունեմ, որ բոլոր ընդդիմադիր ուժերի համար դեմոկրատիան եւ մարդու իրավունքները կարեւոր են եւ կարող են գաղափարական հենարան դառնալ: Ինձ թվում է, որ շատ ընդդիմադիր ուժեր դեմոկրատիան եւ մարդու իրավունքները կարեւորող զանգվածից ձայներ ստանալու հույս պարզապես չունեն, հետեւաբար, իրենց դանդաղկոտությունն այս հարցում դառնում է տրամաբանական: Արժեքային խնդիրներ են սրանք: Կարծում եմ, որ Հայաստանն ունի քաղաքացիական հասարակության ընդլայնման կարիք, չեմ ասում, թե նոր քաղհասարակություն ձեւավորելու, որովհետեւ նախկինում ակտիվ քաղհասարակության որոշ էլեմենտներ էլ այսօր ակտիվ են եւ շարունակում են իրենց առաքելությունը: Այնուամենայնիվ, կա ընդլայնման կարիք, որովհետեւ իշխանափոխությունից հետո նրանց շարքերը նոսրացել են, շատերը հայտնվել են իշխանական ուղեծրում: Քաղհասարակության մեջ ներդրումներ են հարկավոր եւ ոչ այնքան ֆինանսական, որքան՝ գաղափարական, փիլիսոփայական: Այժմ արձանագրվում է նախորդ 8 տարիների ընթացքում մեր՝ որպես համահավաք ընդդիմադիր հայացքներ ունեցող զանգվածի չարածների արդյունքը: Եթե իշխանափոխություն տեղի չունեն, այս ամենը շարունակելու է մեր՝ ընդդիմադիրներիս ուսերին մնալ:

- Ասացիք, որ ընդդիմադիր ուժերին մարդու իրավունքները, դեմոկրատիան չեն հետաքրքրում: Այսինքն՝ Քոչարյանը, Ծառուկյանը եւ Սամվել Կարապետյանը չե՞ն կարեւորում այդ արժեքները, ինչպես ակնհայտ է, որ չի կարեւորում Փաշինյանը:

- Ասել, որ անխտիր բոլորին չի հետաքրքրում, մի փոքր պատասխանատու հայտարարություն կլինի, քանի որ նրանց շարքերում կան մարդիկ, որոնց հաստատապես մարդու իրավունքները հետաքրքրում են, սակայն նրանց լիդերների համար, այո, մարդու իրավունքները, հավասար իրավունքները, ժողովրդավարությունն առաջնահերթություններ չեն: Եթե այս հարցերը նրանց համար կարեւոր լինեին, ապա նվազագույնը դրանք կքննարկվեին: Ես կարծում եմ, որ Ձեր նշած ուժերը մարդու իրավունքներից եւ դեմոկրատիայից չունեն սպասելիքներ, նրանք ավելի շատ հրաշքների եւ երկնային օգնության են հիմա սպասում: Նրանք կարծում են, որ նման նարատիվներն անկարեւոր են, քանի որ լինելու բանը ուրիշ ձեւով է լինելու….

- Իսկ Ձեզ՝ որպես քաղաքական հայտ ներկայացրած ուժի ներկայացուցչի, որքանո՞վ են այս խնդիրները հետաքրքրում, եթե հետաքրքրում են, գործնականում ի՞նչ քայլեր եք անում:

- Ցավոք, քայլեր անելու մեր ռեալ հնարավորությունները մեծ չեն: Մենք չունենք ենթակառուցվածքներ, չունենք լրատվամիջոցներ եւ ձեւավորած փաստաբանական խմբեր, որոնք կաջակցեն մարդկանց, եւ մեզնից մնում է միայն հանրային պարսավանք ձեւավորելը եւ այդ խնդիրների մասին խոսելը: Մենք այդ մասին խոսում ենք եւ խոսել ենք նաեւ մինչեւ այս իշխանության գալը: Ես Սերժ Սարգսյանի ժամանակ եւս եղել եմ ընդդիմադիր եւ խոսել եմ մարդու իրավունքների հետ կապված բազում խնդիրների մասին: Ի դեպ, երբեմն այնպես եմ խոսել, որ եթե հիմա այդպես խոսեմ, իմ դեմ հաստատ քրեական գործ կհարուցեն եւ ինձ կտանեն կալանավայր, ինչպես, օրինակ, արեցին Արտուր Օսիպյանի հետ:

- Նիկոլ Փաշինյանի վերջին օրերի խելահեղ ագրեսիվ գործողությունները, հայհոյանքները, սպառնալիքները, կնոջը քաշքշելը, ըստ Ձեզ, ի՞նչ ազդեցություն են թողել ընտրողների վրա:

- Փաշինյանն իր շահերի տեսանկյունից սխալ բան չի անում: Այն, ինչ անում է նա, անում է մտածված: Նրանք իրենց քաղաքական թիմով «արխային են ընկել» եւ վստահ են, որ իրենք են հաղթելու, բայց այստեղ նրանք ռիսկեր են տեսնում, որովհետեւ, եթե, միեւնույն է՝ ընդդիմությունը չի հաղթելու, ապա դա կարող է ստեղծել ռիսկ, որ իրենց ընտրազանգվածը կորցնի մոտիվացիան եւ չգնա ընտրության: Գաղտնիք չէ, որ Փաշինյանի ընտրազանգվածի մեջ կան իրենից զզվողներ, սակայն միեւնույն ժամանակ ընդդիմությունից ավելի շատ են զզվում եւ այս երկուսի մեջ նախընտրում են Փաշինյանին:

- Այսինքն՝ Փաշինյանի կիսախելագար կեցվածքը դրակա՞ն է ազդում որոշ շրջանակների վրա:

- Փաշինյանի ընտրազանգվածի համար դա կարեւոր է: Նա արդեն 2 անգամ ատելության խոսք գեներացնելով՝ հասել է հաջողության: Բայց այստեղ այլ թիրախ էլ կա՝ տատանվող զանգվածը: Սոցիոլոգիան հստակ ցույց է տալիս, որ ատելությունն ու ռադիկալիզմը չկողմնորոշված ընտրազանգվածին մղում են ընտրություններին չմասնակցել: Այստեղ ես ուզում եմ ողջույններս փոխանցել ընդդիմադիր այն տիմարներին, ովքեր քարեր են նետում «Բոլորին դեմ եմ»-ի վրա: Մենք պոզիտիվ ենք բերում ընտրական միջավայր եւ թույլ չենք տալիս Նիկոլին՝ ռադիկալիզացնել ընտրազանգվածներին:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

7 ՕՐ Է ԱՆՑԵԼ ԹԱԹՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ

«Հրապարակի» զրուցակիցը փաստաբան **Վարազդատ Հարությունյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ժամանակ հայտարարեց, որ ԲՀԿ-ի նախընտրական ցուցակի 2-րդ համարի՝ Անդրանիկ Թեւանյանի դեմ քրեական վարույթ է նախաձեռնվելու՝ պետական դավաճանության հոդվածով: Երկրի վարչապետը, այն էլ՝ արձակուրդում, բացահայտ հրահանգներ է իջեցնում իրավապահներին: Ի՞նչ է սա:

- Անկախ այն բանից, որ ես ծանոթ չեմ այդ գործի մանրամասներին, երկրի ղեկավարն իրավունք չունի քրեական հետապնդումներ հարուցողներին նման կերպ ուղղորդելու, ավելին՝ գործադիր մարմնի ղեկավարի կողմից հրապարակային ձեւով նման հայտարարություններ անելը, նման պնդումներով հանդես գալը կանխորոշում է քրեական հետապնդում իրականացնողների վարքը, ինչպես նաեւ՝ դատարանների վարքը՝ տվյալ գործի փաստական հանգամանքներին գնահատականներ տալուն: Երբ երկրի ղեկավարը նման պնդումներով է հանդես գալիս, սպառնում է բացահայտ, դա թաքնված, իսկ ավելի ճիշտ՝ հենց բացահայտ ուղղորդում է իրավապահ մարմիններին: Այս ամենը, միանշանակ, ապօրինի է եւ ընդունելի չէ իրավական պետության գոյության պայմաններում: Այն հակասում է ժողովրդավարության բոլոր սկզբունքներին: Նման պարագայում չի կարող լինել արդար դատաքննություն, ինչն ուղղակիորեն հակասում է ժողովրդավար պետության սկզբունքներին:

- Թեպետ մեզանում դատահիրավական համակարգը երբեք էլ չի փայլել անաչառությամբ, սակայն այժմ առավել, քան երբեւէ, մարդիկ չեն վստահում իրավապահներին, եւ անգամ նրանք, ովքեր բացահայտորեն ենթարկվում են բռնության իշխանությունների կողմից, անիմաստ են համարում դատարան դիմելը, որովհետեւ չկա վստահություն համակարգի հանդեպ: Ինչո՞ւ:

- Մարդիկ տեսնում են, որ չկա արդար դատական համակարգ եւ չկա քրեական հետապնդում իրականացնող մարմինների բավարար անկախություն: Փաշինյանը հայտարարություն է անում, դրանից քիչ անց դատախազությունը նույն գործի շրջանակներում հաղորդագրություն է տարածում: Նյութապես քաղաքացիներին շահագրգռելու մասով էլ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներին հետապնդում են ամենաբիրտ ձեւով, կիրառում են ամենախիստ միջոցները, բայց արդեն յոթերորդ օրն է՝ Արման Թաթոյանը համանման մի ձայնագրություն է հրապարակել՝ Արմավիրի մարզի հայտնի դասախոսի մասնակցությամբ, սակայն մինչ այս պահը որեւէ վարույթ չի նախաձեռնվել, ոչ էլ, բնականաբար, ինչ-որ անձի դեմ մեղադրանք կա, խափանման միջոցի մասին խոսելն էլ անիմաստ է: Նման խտրական արդարադատության պարագայում մարդիկ ի՞նչ ակնկալիք կարող են ունենալ իրավական համակարգից:

- Նիկոլ Փաշինյանը սիրում է պետական դավաճանների բացահայտել, ով իրենց դեմ խոսում է, պարզվում է՝ պետական դավաճան է: Ըստ օրենքի՝ անձի ո՞ր արարքը կամ արարքները կարող են համարվել պետական դավաճանություն:

- Օրինակ՝ թշնամու կողմն անցնելը կարող է համարվել պետական դավաճանություն, այլ պետության օգտին եւ ի վնաս Հայաստանի Հանրապետության գործողություններ կատարելը: Բավականին լուրջ հանցակազմ է սա եւ շատ կոնկրետ:

Կրիպտոարժույթով միլիոնատերը

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացրել իր եկամուտների եւ գույքի մասին հայտարարագիր: Որպես անշարժ գույք՝ հայտարարագրել է մեկ առանձնատուն Երեւանում, 2021թ. արտադրության VOLKSWAGEN մակնիշի մեկ ավտոմեքենա, որը գնել է 2022-ին: Ավինյանի բանկային հաշվին տարեվերջին եղել է 5 մլն 858 հազար 209 դրամ: Ունեցել է 20 մլն 887 հազար 335 դրամ կանխիկ գումար: Տարվա ընթացքում ստացել է 57 մլն 671 հազար 356 դրամ եկամուտ, որից 26 մլն 523 հազար դրամը՝ Poolin կրիպտոմայնինգի հարթակից, իսկ մնացածը՝ Երեւանի քաղաքապետարանից: Ավինյանը հայտարարագրել է նաեւ 5.41 Bitcoin, որը հավասար է 153 մլն 463 հազար 510 դրամի: Նա նաեւ 5 Ethereum կրիպտոարժույթ ունի, որը հավասար է 3 մլն 884 հազար 263 դրամի: Իսկ ADA Cardano կրիպտոարժույթով Ավինյանի միջոցները կազմել են 1,483, որը հավասար է 134 հազար 385 դրամի:

Ավինյանի կինը՝ Մարիամ Պահլավունին, որը «Բարուր» ընկերության տնօրենն է, եւ ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է իրեն, 34 տոկոս բաժնեմաս ունի «Լավ փրոդաքթս» ընկերությունում, 2017թ. արտադրության RANGE ROVER մակնիշի ավտոմեքենա, 44.5 մլն դրամ ավանդ, 15 մլն դրամ վարկ: Իսկ եկամուտները կազմել են 4 մլն 976 հազար 465 դրամ:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՁԳՈՒՄ Է, ՈՐ ՀՈՂԸ ՓԱԽՉՈՒՄ Է ՈՏՔԵՐԻ ՏԱԿԻՑ

Հունիսի 7-ի ընտրությունների պաշտոնական քարոզարշավի երկրորդ շաբաթն է լրանում, բայց պետությունն 8 տարի ղեկավարած եւ եւս 5 տարի ղեկավարելու հայտ ներկայացրած անձը իրենց ստեղծած մղձավանջից դուրս գալու ելքերի մասին խոսելու փոխարեն սպառնում է ոչ միայն քաղաքական մրցակիցներին, այլեւ՝ շարքային քաղաքացիներին: Կալանավորում է իրեն քննադատողներին, մատ է թափ տալիս, մուննաթ գալիս, հաշիվ պահանջում, թե ինչու չեն մարդիկ զոհվել պատերազմում, ինչու են կենդանի մնացել:

Սկզբում թվում էր, թե իր կռիվը միայն ընդդիմադիր թեկնածուների, գլխավոր մրցակից Սամվել Կարապետյանի դեմ է, որին սպառնում էր բոմժ դարձնել, սակայն հետո պարզվեց, որ Փաշինյանի թիրախում բոլորն են, որոնց սպառնում է «կզզընցնել», «սատկացնել», խոսում է «Գագիկ Ծառուկյանի լակոտին փակելու» մասին, ուզում է խլել «Արարատցեմենտը», Ռոբերտ Քոչարյանին կրկին բանտարկել՝ Մարտի 1-ի գործով: Արցախցի մարդուն, որն ընդամենը հարցեր էր տալիս նրան, կալանավորեցին: Նրան քննադատող բժշկուհուն ուզում էին ազատել աշխատանքից: Վանաձորում հանրահավաքի ժամանակ էլ հայտարարեց, որ Ազգային անվտանգության ծառայությունը հանցագործության մասին հաղորդում կներկայացնի Քննչական կոմիտե՝ ԲՀԿ ցուցակի երկրորդ համար Անդրանիկ Թեւանյանի դեմ, հայրենիքի դավաճանության մեղադրանքով: Թեւանյանը, արձագանքելով Փաշինյանի հայտարարությանը, նշեց. «Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերին ծառայող ու պետական դավաճանությամբ Արցախը հանձնած, Հայաստանի տարածքները հանձնած Նիկոլ Փաշինյանն ինձ մեղադրում է պետական դավաճանության մեջ, սա խոսում է մեկ բանի մասին, որ հաճախորդը հուզված է, նյարդայնացած է, փրփուրներից է կախվում»: «Փաստացի, ինքը հրահանգներ է տալիս իրավապահներին ու ցուցումներ է տալիս, թե ում պետք է կալանավորեն, ում դեմ գործ հարուցեն: Այս ամենը տեղի է ունենում ուղիղ եթերի ռեժիմով»,- ասաց Թեւանյանը: ԲՀԿ-ն էլ հայտարարեց. «Իրավական պրակտիկայի տեսանկյունից սա աբսուրդ է եւ նախադեպ չունեցող վարքագիծ: Վարչապետն ուղիղ եթերում հանձնարարում է գործ հարուցել ընդդիմադիր առաջատար ուժի թեկնածուի հանդեպ՝ ոչ միայն գերազանցելով իր լիազորությունները, այլեւ խախտելով իրավական պրակտիկայի եւ միջազգային փորձի տրամաբանությունը»: Փաշինյանը Վանաձորում անդրադարձավ նաեւ Մարտի 1-ի գործին. «Ռոբերտ Քոչարյանը Մարտի 1-ի գործով պետք է երկար տարիներով բանտ նստի»: Բայց գործն արդեն ավարտված է, վաղեմությունն էլ անցել է. եթե անգամ Փաշինյանը շատ ցանկանա, դա հնարավոր չէ:

«Սամվել Կարապետյանը, որպես փողեր լվացող, որպես մանկապարտեզից հոսանքի փողեր գողացող, պետք է երկար տարիներ բանտ նստի Հայաստանի Հանրապետությունում»,- մի հայտարարություն էլ Կարապետյանի մասին արեց, մինչդեռ արդեն մոտ մեկ տարի է՝ խլել են ՀԷՑ-ը, բայց ոչ մի քրեական գործ ընթացք չի ստացել, որովհետեւ հանցակազմ չեն գտնում: Սա էլ է սուտ ու կեղծիք:

Սուրեն Պապիկյանն էլ, ոչ ավել ոչ պակաս, հայտարարեց, թե ինչու Կարապետյանների գերդաստանի 6 տղաներից ոչ մեկը չի զոհվել 44-օրյա պատերազմում: Ի՞նչ բացատրություն տալ Փաշինյանի եւ իր խմբակի այս մերժելի պահվածքին, սպառնալից հայտարարություններին: ԱԺՄ առաջնորդ **Վազգեն Մանուկյանը**, որի անունն էլ էր հնչեցրել Նիկոլ Փաշինյանը մի քանի օր առաջ, մեզ ասաց, թե առաջիկա օրերին վարչության նիստ կանեն ու իրենց գնահատականը կտան: Հավելեց միայն, որ այսպիսի խայտառակ նախընտրական շրջան ինքը չի հիշում. «Բայց բացատրել դա, նշանակում է կրկնել այն ամենը, ինչի մասին վերջին 5 տարում ես մշտապես խոսել եմ»:

Փաշինյանի երբեմնի գաղափարակից, նրա «Հայկական ժամանակում» 10 տոկոսի փայատեր **Պետրոս Մակեյանը** եւս վկայեց. ինքը 1995-2021 թթ. բոլոր ընտրական գործընթացներին մասնակցել է, բայց նման խայտառակ քարոզարշավ չի տեսել. «Իշխանությունը սովորաբար պետք է լինի զուսպ, հավասարակշռված, ցանկացած ակտիվ գործընթացի համար պատասխանատուն իշխանությունն է, բայց այսօր Նիկոլն ինքն է նախաձեռնում այս անկայուն իրավիճակը, գուցե այն պատճառով, որ ինֆորմացիա ունի՝ իր տակից հողը փախչում է, եւ ուզում է արտակարգ իրավիճակ ստեղծել՝ չեղարկել ընտրությունները, կամ էլ իր արտաքին տերերն են նման հրահանգ տվել՝ երկրում քաոս ստեղծել, որ կարողանան կառավարել: Ես չեմ կարծում, թե այս ամենն արվում է սեփական ընտրազանգվածի, տատանվողների համար, ինքն իր ընտրազանգվածի հետ հաշվի չի նստում, ընտրազանգվածն իր գործիքն է, ինքը խոշոր խաղերի մեջ է, եւ տերերի հետ է իր հարցուպատասխանը, կամկամ-ի վրա է դրված: Մայիսի 28-ից հետո հստակություն կլինի՝ Նիկոլին պահելո՞ւ են, թե՞ փոխելու: Այդ օրը զորահանդես է անելու, բայց ներսի լսարանին է դա ուղղված, հիշում եք, չէ՞, Ալիեւի առջեւ արդեն արդարացել է, որ շքերթն ուժի ցուցադրություն չէ՝ հաշվետվություն է տալիս: Նախապես արդարացավ, որ Ալիեւը չմեղադրի, բայց իրականում այդ օրվանից հետո պարզ կդառնա՝ իրեն կպահեն, թե՝ ոչ»: Մակեյանի խոսքով, Փաշինյանը Հայաստանը դարձրել է Հյուսիսային Կորեա, եւ քաղաքացիների հետ նրա շփումներն էլ դրա մասին են վկայում:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՅՆՊԵՍ ԿԱՆԳՆԵՔ, ՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՊԱՍՏԱՌԸ ՉԵՐԵՎԱ ՆԻԿՈԼԻ ՀՈԳԵԿԱՆԸ ԽԱՆԳԱՐՎՈՒՄ Է

«Հրապարակի» զրուցակիցն է Լոռվա մարզից «Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածու **Անդրանիկ Գեւորգյանը:**

- ՔՊ-ականներն աղմկում են, թե Սամվել Կարապետյանը ՌԴ հատուկ ծառայությունների աշխատակից է, նշում են, որ Նարեկ Կարապետյանը Ռուսաստանի քաղաքացիություն ունի, դա թաքցրել է, փաստաթղթեր է կեղծել: Ի՞նչ կասեք այս մասին:

- Նիկոլ Փաշինյանը շրջում է գյուղերում ու լավ տեսնում է՝ ինչ է կատարվում: Ինքը շատ լավ հասկանում է, որ ժողովուրդը 8 տարիների ընթացքում զզվել է այս մարդուց, տանել չի կարողանում ո՛չ դրա խոսույթը, ո՛չ խոստումները, ո՛չ ծրագրերը: Այդ ամեն ինչը լավ հասկանալով, պատրաստ է ամեն ինչի: Ոնց որ հիմա ձայնագրություններ են հրապարակում, մարդկանց անձնական տիրույթ են ներխուժում, հաշվի չառնելով բազմաթիվ հանգամանքներ, մոնտաժում՝ իրար են կպցնում ձայնագրությունները, եւ նման բաներ: Փաշինյանը նստում է, վիդեոն միացնում, Ֆեյսբուքում ինչ-որ բաներ խոսում, անհասկանալի դրսեւորումների մեջ է մարդը: Այն, որ մարդկանց հանդեպ անհարգալից վերաբերմունք է ցույց տալիս, ցանկացած ճիշտ հարցադրումից ջղաձգվում, երբ որ իրեն մատնացույց են անում, աչքն են կոխում, որ դու խոստացել էիր, որ պետք է տեր կանգնեիր խաղաղությանը: Հիմա եկել է, գյուղերում ասում է՝ տեր կանգնեք խաղաղությանը: Եղբայր, սխալ տեղ ես եկել խոսում, ժողովուրդը միշտ էլ տեր է եղել թե՛ երկրին, թե՛ խաղաղությանը: Այդ դու, քո փոքրիկ խմբակով տեր չես կանգնել այս երկրին ու ժողովրդին: Ասեմ, որ ժողովուրդը շատ լավ գիտակցում է, առանց վախենալու կանգնում են դեմը, երեսին ասում են այն, ինչ մտածում են իր մասին: Մարդն ուղղակի ցնցումների մեջ է: Մի բան պիտի անի, չէ՞, փրփուրներից կախվելով, որ փորձի ցույց տալ ժողովրդին, որ ինքն ուժեղ է: Բայց ինքը չի պատկերացնում, որ դրանով ավելի է ցածրանում, ավելի է թուլանում: Ու իր հետեւից ընկած 2 հոգի էլ՝ ոմն պարոն ու ինչ-որ տիկին, որ խոսել անգամ չգիտեն, 8 տարվա մեջ երկու բառ են սովորել, հիմա ընկել են՝ գյուղերում խոսում են: Խոսացեք, ինչքան իրենք շատ խոսեն, այնքան մեր ռեյտինգը կբարձրանա: Ո՛չ խոսել գիտեն, ո՛չ ժողովրդի հետ շփվել գիտեն: Գալիս է գյուղեր, փոխանակ ծրագիր ներկայացնի, մեզնից բամբասում է ու գնում, քանի որ գիտեն, որ Սամվել Կարապետյանը միակ ուժն է, որ հաստատ երկիրը կհանի այս վիճակից, ու այն մարդն է, որ կարող է կանգնեցնել Փաշինյանի հակապետական քաղաքականությունը:

- Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Լոռիում քարոզարշավի ժամանակ հայտարարում էր՝ տրորելով կանցնենք ձեր վրայով:

- Դա ի՞նչ խոսույթ է, դա պաշտոնյանին վայել խոսո՞ւյթ է: Խոսքը ֆիզիկապես տրորելու մասին չէ, իրենց իսկ գյուղերում իրենց արդեն տրորել ենք: Այն, որ մեզ ջերմ ընդունում են, գալիս փաթաթվում են, դա է ապացուցում: Մենք ինչ անում ենք, մեր հետեւից կրկնում են: Ավտոբուսներով ման էինք գալիս, ավտոբուսները բերեցին դրեցին, պիկապով ման էինք գալիս, պիկապները բերեցին: Մենք հասկանում ենք, որ օրինակելի ենք, հասկանում ենք, որ մենք ցույց ենք տալիս ձեւը՝ ոնց պետք է մարդկանց հետ շփվես, մարդկանց ինչ առաջարկես: Ու դրանից հետո ձերբակալություններ, խուզարկություններ: Կեղծ ժպիտը դեմքին՝ գնում է, մարդկանց հանդիպում, խոսում է՝ իբր բարի, ժողովրդին լավը կամեցող պաշտոնյա, իրիկունն էլ հրահանգում է՝ մտեք տները, խուզարկեք: Դուք չեք պատկերացնի, թե գյուղերում ինչ է կատարվում: Ամեն բան անում են, որ գյուղերում վախի մթնոլորտ ստեղծվի, որ ժողովուրդը չգնա՝ իր ընտրությունն անի: Բայց մենք՝ Սամվել Կարապետյանի առաջնորդությամբ, դրա դեմն առնում ենք ու թույլ չենք տալու, որ ժողովրդին իրենց ձեռքի խաղալիքը դարձնեն: 2 կտոր ասֆալտ են անում, գալիս-կանգնում-ասում է՝ քո համար ասֆալտ եմ արել, շնորհակալություն ասա, երեսով է տալիս: Դպրոց են կառուցում ու ասում են, տես՝ ինչքան սիրուն ա: Ո՞ւմ է պետք այդ դպրոցը, որ աշակերտ չի ունենալու: Այսօր Հոբարձի գյուղում էինք, այդ գյուղի դպրոցը փակեն՝ գյուղը դատարկվելու է: Մենք սրա դեմ ենք պայքարում: Ամենաշատ դպրոցները Լոռվա մարզում են փակվում: Հաջիեւն արդեն ասում է, թե Հայաստանում ադրբեջանցիները որտեղ պետք է ապրեն: Իսկ իշխանությունը սրան չի պատասխանում: Փոխարենը՝ ակտիվ քարոզում է, որ Սամվել Կարապետյանն իր ձայները տալու է Ռոբերտ Քոչարյանին: Չկա նման բան, որովհետեւ գիտեն, որ ժողովուրդը դրանից էմոցիոնալ առումով ազդվում է, սկսել են դրա մասին էլ խոսել, եւ որքան պետական ռեսուրս կա, քարոզարշավի վրա են դրել, որ պայքարեն մի մարդու դեմ: Ու այդ մի մարդուն էլ այնպես են արել, որ տնից դուրս չի կարողանում գա՝ քիչ է, հիմա էլ նկարների դեմ են պայքարում: Իրենց համակիրներին ասում են՝ ավտոնոտերով այնպես կանգնեք, որ Սամվել Կարապետյանի քարոզչական պաստառը չերեւա, թե չէ Նիկոլը որ տեսավ Սամվել Կարապետյանի նկարը, կարող է հոգեկանը խանգարվի: Մենք էլ Եվրամիության դիտորդներին կանչում ենք, ներկայացնում ենք իրավիճակը, եւ այդ մարդիկ շատ լավ իմանում են, թե Հայաստանում ինչ է կատարվում: Հիմա էլ ամբողջ Տաշիրի տարածաշրջանում այնպիսի ուժեր են կուտակել, հավանաբար՝ վախենում են արժանապատիվ մարդկանցից:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԴԵՆ ՉԵՆ ԷԼ ԹԱՔՑՆՈՒՄ, ՈՐ ԲՈԼՈՐ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՆ

*Ընտրարշավի մասին զրուցել ենք իրավապաշտպան, փաստաբան **Հովհաննես Խուդոյանի** հետ:*

- ԿԸՀ քարտուղար Արմեն Սմբատյանը տեսանյութով փորձեց հանրությանը հավաստիացնել, որ անցողիկ շեմը չհաղթահարող կուսակցությունները ձայն չեն փոշիացնելու, ու մի մանիպուլյատիվ տեքստ արտաբերեց, որ ձայն փոշիացնել հնարավոր չէ: Սակայն փորձագետներն ասում են, որ դա ընտրողին ապակողմնորոշելու համար է արվում, քանի որ անցողիկ շեմը չհաղթահարած ուժերին տրված ձայները բաշխվելու են խորհրդարան անցած ուժերի միջեւ:

- Հայտարարությունն անձամբ չեմ տեսել, բայց այդ երեւույթի վերաբերյալ կարող եմ ասել, որ քաղաքական կուսակցություններն ազատ են՝ եւ քարոզչություն անել, եւ հակաքարոզչություն, եւ նաեւ պատճառաբանել, թե ինչու պիտի ընտրեն իրենց կամ չընտրեն մյուս կուսակցություններին, այդ թվում՝ նաեւ այն պատճառով, որ իրենց ձայները կարող են պիտանի չլինել: Բնականաբար, ցանկացած կուսակցություն, որ անցողիկ շեմը չի հաղթահարում, այդ կուսակցության օգտին քվեարկած քաղաքացու ձայնն ընտրությունների արդյունքի վրա ազդեցություն չի թողնում: Այսինքն, այդ իմաստով այդ ձայնը կորում է, բայց նաեւ այդ կուտակված ձայները, դրանց արդյունքում հաշվարկի մեխանիզմն այնպես են փոխվում, որ այդ տոկոսի չափով, ինչքան որ ձայն անցողիկ շեմը չի հաղթահարել, առավելություն է տրվում առաջին տեղը գրաված կուսակցությանը, այսինքն, սա բաշխվում է տարբեր չափերով՝ ըստ համամասնության, առավելագույնը տալով առաջին տեղը զբաղեցրած կուսակցությանը: Պարզ է, որ այդ առաջին տեղը զբաղեցնող կուսակցությունը, եթե սահմանին շատ մոտիկ շեմի հասնի, այդ ձայների միջոցով կարողանալու է 50 տոկոս հավաքել: Հետեւաբար, այն մարդիկ, ովքեր իրենց ձայները տալու են այդ կուսակցություններին, ստացվում է՝ անուղղակի ձեւով ձայն տալ մի կուսակցության, որին իրենք չեն ցանկանում ընտրել կամ աջակցել:

- Այսինքն, երբ ԿԸՀ քարտուղար Սմբատյանն ասում է, որ ձայների փոշիացում չկա, եւ այլն...

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կամ նրա ներկայացուցիչները բոլորի մասնակցության հավասարությունը պաշտպանելու համար պետք է ինչ-որ նման դիրքորոշում հայտնեն, բայց ընտրությունների արդյունքների հաշվարկման բանաձեւն այլ բանի մասին է խոսում, համենայնդեպս, կարծում եմ, այլ մեկնաբանությունների կարիք չկա ԿԸՀ-ի կողմից:

- Փաշինյանն իր քաղաքական հակառակորդներին աջուձախ սպառնում է նստեցնել, ունեզրկել, մարդկանց ասում է՝ ինչո՞ւ չեք զոհվել եւ այլն:

- Բացի այն, որ դա քաղաքական հետապնդումների եւ հրահանգ է, եւ ուղղակի ապացույց, այսինքն՝ ընտրական պրոցեսից դուրս, ընտրական պրոցեսում էլ դա իրավախախտում է, որովհետեւ հնարավոր է ազդեցություն ունենա ընտրությունների արդյունքների վրա, որովհետեւ ընդհուպ այդ խոսակցությունները հասնում են այն կետին, որ ասում են՝ ով որ կընտրի այս ուժի ներկայացուցիչներին, մենք իրենց կհամարենք գործակալներ: Սա ուղղակի ազդեցություն է ընտրողների կամքի վրա եւ հարկադրանքի սպառնալիք է պարունակում:

- Իսկ օրենքով սրան հակազդելու հնարավորություններ կա՞ն:

- Այս քարոզչություն անող կուսակցությունը՝ նման քարոզչության որոշակի շեմը հատելու պարագայում, չպետք է մասնակցի ընտրություններին, որովհետեւ արդար մրցակցության մեջ չի գտնվում, եւ հնարավոր է ներկայացնել դիմում՝ կուսակցության գրանցումը չեղարկելու համար:

- Հաշվի առնելով այն իրավական միջավայրը, որում հայտնվել է Հայաստանը, դա հնարավո՞ր է:

- Ես խոսում եմ իրավական հնարավորությունների մասին, բայց դա չի նշանակում, որ կյանքում դա կարող է տեղի ունենալ:

- Ներկայիս Հայաստանում՝ եթե հստակեցնենք:

- Այո, որովհետեւ մենք տեսնում ենք, որ նույն իրավապահները եւ այս կամ այն կառույցները վերջին օրերին բախվել են խնդրի, երբ որ անհիմն միջամտություն է տեղի ունենում քարոզչական կոնտենտի նկատմամբ, ու այդ բոլոր մարդիկ չեն էլ թաքցրել իրենց ակնհայտ փոխկապակցվածությունը եւ իրենց իշխանություններին, եւ իրենց քաղաքական քարոզչությանը, էլ չասեմ, թե իրավապահ մարմիններն ինչ ակտիվ ու ռեակտիվ են այդ քաղաքական հակաքարոզչությունն իրականացնում:

- Հակակոռուպցիոն կոմիտեն երեկ տեսանյութ էր հրապարակել, որտեղ ինչ-որ մարդկանց ձայնագրություններ էին, Այդտեղ խոսում էին բենզինով ապահովելու մասին՝ հանրահավաքի մասնակցելու համար: Ու դրանք ներկայացվում էին որպես ընտրողների վրա ազդելու փորձեր, մինչդեռ Վենետիկի հանձնաժողովի որոշում կա, որ հանրահավաք գնացող մարդկանց տրանսպորտային միջոցներով, դրանց վառելանյութով, ջրի եւ սննդի գումարով ապահովելը նորմա է, ոչ թե օրենքի խախտում:

- Վենետիկի հանձնաժողովի որոշումն այդ առումով վերապահում ունի նախընտրական քարոզչության փուլի համար, բայց ես այդտեղ ուրիշ խնդիր եմ տեսնում, որ իրավապահ մարմինները, երբ որ թեկուզ իրական հանցանք են բացահայտել, դրա մասին ինֆորմացիան տալիս են՝ քաղաքական ուժերի անուններ նշելով եւ այնպիսի բովանդակությամբ խոսակցություններ տարածելով, որն իրավական նշանակություն չունի: Օրինակ, այդ տեսանյութում մենք տեսնում ենք, որ մի 2-3 րոպե խոսում են ինչ-որ փոդի շարժից, որը տեսականորեն կարող է ունենալ նշանակություն, բայց այդ խոսակցությունների վերջնանպատակը, ակնհայտորեն, տարբեր խմբերի միջեւ պառակտում մտցնելուն, վատ արտահայտություններ հրապարակելուն է միտված, որը Քննչական կոմիտեի կամ Հակակոռուպցիոն կոմիտեի խնդիրը չէ, եւ մենք տեսնում ենք, թե դա ոնց է պասերով աշխատում: Նույն օրը դա հրապարակվում է, նույն օրը դա դառնում է իշխող ուժի քաղաքական խոսույթի մաս:

- Եվ օգտագործվում է քաղաքական հակառակորդներին ճնշելու համար:

- Օրինակ բերեմ. որոշ ժամանակ առաջ ինչ-որ խոսակցության մեջ ինչ-որ մարդիկ իրենց շրջապատի մարդկանց մասին խոսելիս ասում են՝ շուն-շանգյալ: Հիմա դա ընդհանրապես նշանակություն չունի, մարդու մասին կարող ես ասել՝ շուն-շանգյալ եւ կարող ես ասել՝ շատ հարգարժան մարդ, եթե խոսակցության մեջ կաշառքի մասին թեմա կա՝ կա, եթե չկա՝ չկա, բայց երբ որ իրենք այդ խոսույթը տարածում են, տեսնում ենք, որ հաջորդ օրը ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանն այդ բառերով սկսում է վիրավորել ընդդիմության համակիրներին:

- Այսինքն, նախադեպ են դարձնում:

- Պասերով խաղում են, ապօրինի գաղտնալսում են մարդկանց կամ առնվազն ապօրինի հրապարակում են այս հատվածները, որն իրավական նշանակություն չունի, որպեսզի քաղաքական քարոզչության մեջ կարողանան օգտագործել: Հիմա եթե հավասարության նժարին դնենք, օրինակ, նույն իրավապահների, իրենց ընտանեկան կամ ընկերական զրույցները վերհանենք եւ դարձնենք հանրային սեփականություն կամ «Քաղաքացիական պայմանագրի» հեռախոսազանգերը գաղտնալսենք, վստահաբար կարող եմ ասել, որ խուսույթն առանձնապես շատ չի տարբերվելու, բայց, բնականաբար, սա օգտագործվում է երկակի ստանդարտներով եւ միակողմանի:

- Փաշինյանն արձակուրդում է, սակայն հայտարարում է, որ Ծառուկյանի ցուցակից մարդ կա, որը կհետապնդվի պետական դավաճանության հոդվածով, ապա անունն է հրապարակում՝ Անդրանիկ Թեւանյան, ասում է՝ ԱԱԾ-ն օպերատիվ տեղեկություններ է ստացել: Ի՞նչ է սա նշանակում:

- Այդ մի հայտարարությունն առնվազն հիմք է ցանկացած անձի նկատմամբ, եթե նույնիսկ հիմքերը լինեն, հետապնդումը քաղաքական որակելու համար: Ի վերջո, ինչ ենք տեսնում. Փաշինյանը հայտարարություն է անում, դրանից կես ժամ հետո դատախազությունը հայտարարություն է տարածում, որ սկսել ենք ինչ-որ գործարանի օրինականության վերաբերյալ գործընթաց: Արդեն չեն էլ թաքցնում, որ այս բոլոր վարույթներն ուղղակի քաղաքական պատվերի արդյունք են:

- Այսինքն, որքան մոտենանք ընտրություններին, այնքան ավելի սուր դրսեւորումներ ենք տեսնելու:

- Ինչքան մոտենանք, այնքան շատ ավելի կեղտոտ, շատ ավելի զազրելի եւ ապօրինի է դառնալու: Դա կարող եմ վստահ ասել:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԲՈՒՀ Է ԳՈՐԾՈՒՄ

Որակյալ բարձրագույն կրթությունն անձի առաջընթացի, հաջողությունների համար դռներ է բացում: Հայաստանի բուհերը համալսարանների միջազգային վարկանիշներում ցածր տեղեր են զբաղեցնում, չնայած պետական եւ մասնավոր բուհերի մեծաթիվ լինելը պետք է բարձրագույն կրթության ոլորտում ուժեղ մրցակցություն եւ բարձրորակ կրթություն ապահովեր: ՀՀ-ում գործում է 23 պետական բուհ, այդ թվում են Հայաստանի ֆրանսիական եւ եվրոպական համալսարանները: 1991-ից գործում է Հայաստանի ամերիկյան համալսարանը, որը պետական բուհ չի համարվում: Գործում են օտարերկրյա պետական 5 բուհերի մասնաճյուղեր եւ Հայաստանում «Արեւմտյան Ուկրաինայի ազգային համալսարանի կրթագիտական ինստիտուտ» անունով մի բուհ: «Ինստիտուտ» եզրույթը նշանակում է հաստատություն, ԽՍՀՄ-ում այդ բառն օգտագործվում էր համալսարանի կարգավիճակ չունեցող բուհերի վերաբերյալ: Ցանկանալով տեղեկություններ ստանալ Հայաստանում ուկրաինական ինստիտուտի մասին, ԿԳՄՍ նախարարին տեղեկատվական հարցում եմ արել. «Արեւմտյան Ուկրաինայի ազգային համալսարանի Երեւանի կրթագիտական ինստիտուտը բարձրագո՞ւյն, թե՞ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, երբվանի՞ց է գործում: ԿԳՄՍ նախարարության կողմից արտոնագիր, հավաստագիր ստացե՞լ է, ե՞րբ»:

ԿԳՄՍ փոխնախարար Արաքսիա Սվաջյանը պատասխանել է. «Արեւմտյան Ուկրաինայի ազգային համալսարանի Երեւանի կրթագիտական ինստիտուտը (իրավանախորդ՝ «Տերնոպոլի պետական տնտեսագիտական համալսարանի (Երեւանի մասնաճյուղ)) հիմնադրվել է 2001 թվականին՝ Հայաստանի Հանրապետության եւ Ուկրաինայի Հանրապետության կառավարությունների 1999 թ. Կիեւում կնքած Կրթության բնագավառում համագործակցության պայմանագրի հիման վրա: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալությունում ինստիտուտի Երեւանի մասնաճյուղը գրանցվել է 2005թ. հունվարի 14-ին: Այն պետական ուսումնական հաստատություն է: ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից լիցենզավորվել է 2001թ. հունիսի 6-ին: Ինստիտուտի շրջանավարտները ստանում են Ուկրաինայի պետական նմուշի ավարտական փաստաթուղթ: Համագործակցության վերոգրյալ պայմանագրում չի նախատեսվել միջին մասնագիտական կրթություն իրականացնելու հանգամանքը»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԴԻԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՂԵԼ՝ ՔՊ-Ի ՇՏԱԲ ԵՆ ԳՆԱՑԵԼ

Պետական գաղտնիք հրապարակած չեմ լինի, եթե ասեմ, որ քարոզարշավի մասնակից բոլոր ուժերի առաջնորդներն այս պահին բանտում կլինեին, եթե իրենց թույլ տային այնպիսի արտահայտություններ ու շարժումներ, ինչն իրեն թույլ է տալիս ՀՀ, այսպես կոչված, վարչապետ Փաշինյանը: Չկա մեկն ամբողջ իրավապահ համակարգում, որ բռնի սանձարձակի ձեռքը, մինչդեռ ողջ իրավապահ համակարգը, ականջները սրած, հետեւում է, թե որ ընդդիմադիր գործիչը կսխալվի ու մի ոչ այնքան հաճելի պիտակ կմեխի Փաշինյանի ճակատին, որ հասնեն, բռնեն, խուզարկեն, քրքրեն, գործ սարքեն մարդու գլխին: Ասել, որ բոլորի համար հավասար պայմաններ են ստեղծված՝ իրենց ծրագրերն ընտրողին ներկայացնելու համար, նշանակում է հիմարություն դուրս տալ: Նիկոլի գլխավորած թիմը՝ ՔՊ-ն, բավական չէ որեւէ ծրագիր չունի, մի բան էլ ողջ պետությունն է ներքաշել մի ախմախության մեջ, որը կոչվում է քարոզարշավ: Եթե ԱՄՆ-ում կամ որեւէ եվրոպական երկրում իմանային, որ տվյալ թեկնածուն, անգամ գործող նախագահը կամ վարչապետը, պետական միջոցներ է մսխում սեփական քարոզատռճիկը ֆինանսավորելու համար, երկու րոպեում կձերբակալեին ու դուրս կհրավիրեին քարոզարշավից: Բայց դուք տեսեք, թե ինչ է կատարվում Հայաստանում: ՔՊ-ի տրամադրության տակ է հայտնվել մի ողջ պետություն՝ իր բոլոր միջոցներով՝ սկսած բյուջեից եւ վերջացրած քյաշ փողով: Եթե սա նորմալ է, ասեք՝ նորմալ է:

Տեսե՞լ եք դրանց շտաբները… Կարո՞ղ եք պատուհանից ներս նայել: Բացառված է: Բոլոր ապակիներին Նիկոլի սրտիկով նկարն է ու լոգունգը: Ո՞վ կա ներսում, ինչո՞վ են զբաղված, ի՞նչ են տալիս ու առնում՝ ոչ ոք չգիտի, բայց թաղապետի կամ գյուղապետի ավտոն առավոտից իրիկուն այդ «շտաբի» առաջ ցցված է: Գնում ես թաղապետարան՝ թաղապետը տեղում չէ, մարզպետարան՝ մարզպետը տեղում չէ, նախարարություն՝ նախարարը տեղում չէ, հարցնում ես՝ բա ո՞ր ջանդամն են, ասում են՝ գնացին շտաբ: Խելքի աշեցեք… Մարդիկ պետությունը թողել՝ ՔՊ-ի շտաբ են գնացել: Բա ի՞նչ կանեն, Նիկոլը միլիոնանոց պարգեւակաշառքները բիրիքով է տվել, պիտի աշխատե՞ն, թե՞ չէ: Ո՞ւմ հետ են աշխատում պետական պաշտոնյաները… Նախկինում թոշակառուները շտաբներից տուն չէին գնում: Մեկ հատիկ թոշակառու չես տեսնի այսօր ՔՊ-ի շտաբի առաջ: Թոշակառուներին էլ են բիրիքով առել՝ բյուջեից: Հպարտներ ջան, 10 հազարն ու «քեշբեքը» ստացա՞ք: Դե գնացեք ծախսեք ու փառք տվեք Նիկոլի կառավարությանը, որ դեռ «կենդանի եք» ու չեք «սատկել»: Ու մեկ էլ իմացեք՝ ստուգելու ենք, հա՛, չփորձեք ուրիշի ձայն տալ, կաշիներդ կքերթենք…

Սրտառուչ է տեսնել, թե ինչքան բարեկամասեր են ՔՊ-ի շտաբներում լռված պետական պաշտոնյաները: Սրանց հորեղբոր տղաները, փեսաներն ու աներձագները մեղվի պես ներսուդուրս են անում, ցուցակ բերում, ցուցակ տանում… դրա համար էլ ջոկ են վճարվում: Ո՛չ ահ ունեն, ո՛չ դող: Ո՞վ է բռնելու նրանց ձեռքը, ոստիկա՞նը… Ոստիկանը մի քանի քայլի վրա է, ու թող փորձի մեկն այս երեւույթի դեմ բողոքի: Կտանեն բանտ, այնտեղից՝ հոգեբուժարան ու մի տխուր հաղորդագրություն կտարածեն, որ քաղաքացին բժիշկների ձեռքերում ինքնասպան եղավ:

1991 թվին, երբ անկախացանք, ես ուղիղ 30 տարեկան էի: Այսօր դառնում եմ 65: Իմ կյանքի մեծ մասը, փաստորեն, անցել է նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: Ոչ մի այլ երկրի քաղաքացի չեմ եղել, ոչ մի րոպե չեմ բացակայել Հայաստանի Հանրապետությունից՝ չհաշված մի քանի անգամ Քոբուլեթի, Ուրեկի գնալը: Ուզում եմ ասել, որ աչքիս առջեւով լիքը ընտրություններ են անցել, լիքը բան եմ տեսել, ու թվում էր, թե այլեւս ոչինչ չէր կարող զարմացնել ինձ: Ավաղ, սխալվել եմ: Ո՞վ էր տեսել, որ նախկինում դատված, ներկայում դատական հետապնդումների մեջ գտնվող այսքան շունուշանգյալ մասնակցի համապետական ընտրություններին: Որի չուխայի փեշը բարձրացնում ես՝ տակը հանցագործ է, բայց ԿԸՀ-ում նրան գրանցել են կուսակցության ղեկավար, քարոզարշավի իրավունք են տվել եւ օժտել բոլոր տեսակի անձեռնմխելիություններով: Միայն թե՝ Նիկոլի գիծն առաջ տանի, խոսի խաղաղությունից, քննադատի հայկական ամեն ինչ, որ դուրս է Նիկոլի ծռտի քարտեզից: Սրանց առաջ ինչ են գցել, որ այսպես «ներդաշնակվել» են հայաստանյան իրականությանն ու ջանադրաբար հաչում են ընդդիմության հասցեին: Եվրոպական փողեր, որ նաեւ սրանց ջանքերով եկան Հայաստան, իբր հիբրիդային պատերազմի դեմ պայքարելու համար: Դուք Լոնդոնում նստած Արմեն Սարգսյանի հայաստանյան խամաճիկին ճանաչում եք՝ Արման Բաբաջանյան է անունը: Նախկինում դատված, 44-օրյա պատերազմի օրերին ադրբեջանական խողովակաշարերի անվտանգության մասին հոգ տարած, ստախոսության համար դատարանի վճռով ներողություն խնդրելու պարտավորեցված, բայց դատարանի վճիռն անտեսած այդ լպրծուն էակն այսօր ոչ միայն կենդանի է, այլեւ կուսակցություն ունի եւ քարոզարշավի է մասնակցում: Սա այն նույն անձն է, որ ԱԺ-ում ԵՄ դրոշն էր պարզել ու հակառուսական մոլեռանդ ճառեր էր ասում: Ո՞վ է սրան ֆինանսավորում, մի՞թե այս հարցը չի հետաքրքրում ՔՊական իրավապահներին… Մյուս կողմից էլ՝ ինչո՞ւ պետք է այդ հարցը հետաքրքրի նրանց, եթե նրանց նույնիսկ Արման Բաբաջանյանի՝ այլ երկրի քաղաքացի կամ օտարերկրյա գործակալ լինելու հարցերը չեն հետաքրքրում: Այ, Նարեկ Կարապետյանի քաղաքացիության հարցը լինի՝ այլ բան: Ողջ պետական ապարատն իրար կանցնի, միայն թե կեղտ բռնեն ու հանեն քարոզարշավից: Բա ի՞նչ, Սամվել Կարապետյանն ու Նարեկը Նիկոլ չեն, ՔՊ չեն, Հայաստանից փախած Արմեն Սարգսյան չեն, ինքնություն ունեցող հայ են, հայ բարերար են…

Նաեւ զարմանում եմ, թե ինչու է անհանգստանում այսքան վարչական ռեսուրս, ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ադրբեջանի աջակցությունն ունեցող Նիկոլ Փաշինյանը, ինչու չի ըմբոշխնում իր մոտալուտ հաղթանակը: Երկու բան է անցնում մտքովս: Մեկը, որ ընդդիմությունն այնքան բան է դրել իր առջեւ, որ շշկռվել է, մյուսը՝ դրսի տերերն ականջին, հավանաբար, փսփսացել են՝ վերջ, տղա ջան, ժամանակդ սպառվել է, մենք նոր թեկնածու ունենք: Այսպիսի բաներ, գիտե՞ք, պատահում են մեծ քաղաքականության մեջ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՊԵՏՔ Է ԽՂճԱԼ ՈՒՍԱՊԱՐԿԵՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Ստեփան Դանիելյանն** է:

- Մոսկվային «մեջքով շրջված» Փաշինյանը քարոզարշավի ժամանակ գովեստի հեղեղ է տեղում ՌԴ-ի եւ Պուտինի հասցեին: ՌԴ-ն գերտերություն է, որին պետք է ակնածանքով վերաբերվել եւ այլն: Նախընտրական խա՞յծ է, թե՞ ցինիզմ:

- Ո՛չ ցինիզմ է, ո՛չ էլ խայծ, այլ՝ ծանրագույն հոգեվիճակ: Մի կողմից, ստիպված է հակադրվել հիմնական ընդդիմադիրներին, որոնք դեմ են կտրուկ աշխարհաքաղաքական փոփոխություններին ու, հետեւապես, Ռուսաստանի դեմ հայտարարություններ անել, մյուս կողմից՝ հասկանում է, թե ինչ հետեւանքներ կունենա, ու փորձում է Ռուսաստանին հասկացնել, որ դա ընդամենը նախընտրական հռետորաբանություն է, եւ ընտրություններից հետո նորից կսերտացնեն հարաբերությունները:

- Այս ամենի ֆոնին, նույն անձը պնդում է, թե Սամվել Կարապետյանը ՌԴ-ի գործակալ է, Հայաստան է ուղարկվել՝ իշխանություն վերցնելու նպատակով, սակայն ունեզրկվելու է ուղարկողի կողմից (ակնարկում է Պուտինին): Նշում է, որ ընդդիմությունը կրկին ուզում է խաղաղության համար երաշխավորներ բերել, ովքեր արդեն իսկ դավաճանել են Հայաստանին ու Արցախին (էլի ակնարկում է Պուտինին):

- Պետք է հասկանալ, թե ում են ուղղված նրա խոսքերը: Նա վախեցած է ընդդիմության աճող ռեյտինգից, մասնավորապես՝ նաեւ «Ուժեղ Հայաստանից», դրա համար փորձում է ընտրողների մոտ վարկաբեկել լիդերներին: Դրանով են պայմանավորված նաեւ Անդրանիկ Թեւանյանի դեմ անհեթեթ մեղադրանքները: Հիմա իրավապահները ստիպված են այդ անհեթեթ մեղադրանքներն իրավական կերպով հիմնավորել: Պետք է խղճալ ուսապարկերի վերածված այդ մարդկանց:

- Պուտինը մեկ ամսում արդեն 2 անգամ հստակ պնդեց, որ անկարելի է միաժամանակ լինել եւ ԵԱՏՄ, եւ ԵՄ անդամ, եւ հորդորեց Հայաստանին՝ այդ հարցով հանրաքվե անցկացնել: Երեւանը պնդում է՝ ԵԱՏՄ-ից դուրս գալու օրակարգ չունի, Արարատ Միրզոյանն էլ հոխորտում է, թե իրավունք չունեն հեռացնել միությունից, քանի դեռ Երեւանը հայտ չի ներկայացրել: «Կհավատա՞ն» Կրեմլում այս խմբակի «արցունքներին»:

- Նման հայտարարություններ արել են նաեւ ոլորտային այլ բարձր պաշտոնյաներ: Սա արդեն հստակ քաղաքականություն է: Պետք է սպասել, որ նման պահանջ կհնչի արդեն վերջնագրի տեսքով: Ռուսական կողմի հայտարարություններին պետք է շատ լուրջ վերաբերվել:

- Մոսկվան անցել է սուր քննադատության՝ շեշտելով, որ Ռուսաստանի դեմ արվում են ոչ բարյացակամ քայլեր՝ Զելենսկուն հարթակ տրամադրելուց մինչեւ Մոսկվայի դեմ ագրեսիվ տրամադրված երկրների հետ ռազմավարական գործընկերության հաստատում: Ինչ հետեւանքներ սպասել:

- Մոսկվայի ուղերձներն արդեն իսկ ազդում են: Խոշոր բիզնեսը վաղուց է մտահոգ վիճակում, միջինն արդեն սկսել է հասկանալ դրա ծանրագույն հետեւանքները: Ցավոք սրտի, որքան հասկանում եմ, մինչեւ ընտրությունների օրը վատ նորությունների շքերթ է լինելու:

- Քարոզարշավի ժամանակ ցցուն դարձան Փաշինյանի հակաարցախյան հայացքները: Նրա ագրեսիվ ու թշնամական խոսույթը, ընդդիմադիր մրցակիցների նկատմամբ սպառնալիքները հատել են բարոյականության բոլոր սահմանագծերը: Հիստերիկ այս աղմուկի մեջ ի՞նչը պիտի կարեւորի հասարակ քաղաքացին, ընտրողը՝ քվեարկությունից առաջ:

- Այդ անձնավորությունը մի քանի սցենարի վրա է աշխատում: Դրանցից մեկն ընտրությունները չեղյալ հայտարարելն ու հատուկ դրություն մտցնելն է, ինչի համար պետք է լինեն բախումներ եւ այլն: Ըստ այդ սցենարի՝ ղարաբաղցիների համար դեր է նախապատրաստված: Հայտնի տեսահոլովակն ու արցախցիներին թիրախավորելն այդ հնարավոր սցենարի տրամաբանության մեջ է պետք դիտարկել:

- Շինծու մեղադրանքներ, բեմադրված ձայնագրություններ, կեղծ տեսանյութեր՝ ենթադրյալ ահաբեկչության վերաբերյալ, կամայական ձերբակալություններ եւ այլն. սա գործող ռեժիմի վերջին օրերի կեղտոտ ձեռագիրն է: Ժողովուրդը, սակայն, չի երկնչում ճշմարտությունը բարձրաձայնելուց, այն էլ՝ Փաշինյանի երեսին: Ի վերջո, կտեսնե՞նք հանրային այս մեծ պարսավանքի ընտրական արդյունքը:

- Հարցը հռետորական է: Ով այս անձնավորության հետեւորդն է, նրանց կարծիքը չի փոխվի, ով ատում է, այդ զգացմունքը կխորանա: Ամբողջ հարցը տատանվող հատվածի պահվածքն է: Կարծում եմ, այս ամենը նրանց վրա ազդեցություն կունենա:

Արա ԱԼՈՅԱՆ

ԵՍ ՄԵՂԱՎՈՐ ՉԵՄ, ԵՍ ԹՇՆԱՄԻ ԵՄ

ԱՐՏԱՀԱՅՈՒՄ

Փաշինյանն ուզում է Ռուսաստանի կողմից Հայաստանի դեմ իրականացվող հակաքայլերի պատասխանատվությունը գցել ՌԴ-ի վրա, թե՝ տեսեք, ես այսքան լավ եմ իրենց նկատմամբ, միշտ ջերմ եմ խոսում, անում եմ ամեն ինչ, որ իրենց սրտով լինի, դրանք այնքան ապերախտ են, որ իմ արածը չեն գնահատում, լավությանը պատասխանում են վատությամբ, գնահատել չգիտեն, մեր

թշնամիներն են, ես դրանում ինչ մեղք ունեմ:

Շնողում քարոզարշավ իրականացնող Փաշինյանը նորից հիշեց, թե ինչ ջերմ հարաբերություններ ունի ՌԴ նախագահի եւ վարչապետի հետ, նույնիսկ շողոքորթեց՝ Ռուսաստանն անվանելով գերտերություն, որի հետ Հայաստանի հարաբերությունները չեն կարող հավասարը հավասարի սկզբունքով լինել: «Ռուսաստանի հետ մեր հարաբերություններում ոչ մի կտրուկ գործողություն մենք չենք անելու, ՌԴ նախագահի հետ ես ունեմ ընկերական հարաբերություններ, բառիս բուն իմաստով: Ես կասկածում եմ, որ 2018 թվականից մինչ օրս ՌԴ նախագահն ավելի շատ կոնտակտներ որեւէ այլ լիդերի հետ ունեցել ա, էս ընթացքում մոտ 200 հեռախոսազրույց ենք ունեցել, ՌԴ կառավարության ղեկավարի հետ շատ ջերմ ընկերական հարաբերություններ ունեմ»,- դիմելով շնողցիներին՝ ասաց նա, ձեռքի հետ էլ իրեն լիդեր հռչակելով:

Ո՞ւմ են ուղղված այս հեքիաթները, ինչո՞ւ են հորինվում, եթե դրանց ոչ միայն հավատացող չկա, այլեւ դրանցից՝ որեւէ օգուտ: Հեքիաթները հիմնականում նախատեսված են երեխաների համար, դրանց նպատակն ամենեւին էլ երեխաներին հիմարացնելն ու խաբելը չէ, որ նրանք հավատան անիրական, մտացածին բաներին, դրանք ունեն ուսուցողական, դաստիարակչական նշանակություն, դրանց միջոցով երեխաները պատկերացում են կազմում բարու, գեղեցիկի, սիրո, երկրի, բնության, աշխատանքի, ընկերների, շրջապատի մասին, դրանք անհանդուրժողականություն են սերմանում չարի, կեղծիքի, դավաճանության նկատմամբ: Մինչդեռ Փաշինյանն իր հեքիաթներով փորձում է հիմարացնել հասարակությանը: Փորձում է, բայց՝ անհաջող:

Ռուսաստանի իշխանության տարբեր ներկայացուցիչներ հայտարարում են, որ Հայաստանը թշնամական գործողություններ է իրականացնում ՌԴ-ի դեմ: ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը բացատրում է, որ իրենք իմաստ չեն տեսնում՝ բարեկամություն անել մի երկրի հետ, որի տարածքից սպառնալիքներ են հնչում Ռուսաստանի դեմ, որը բարեկամանում է Ռուսաստանի թշնամիների հետ: Ասում է՝ ինչո՞ւ պետք է Հայաստանին արտոնյալ առեւտրային պայմաններ տրամադրենք, եթե այդ երկիրը մեր բարեկամը չէ, ինչո՞ւ պետք է օգնեն Հայաստանին՝ զարգանալ, ուժեղանալ, եթե նա ցանկանում է միանալ իրենց թշնամի ճամբարին: Մի՞թե դրանից պարզ կարելի է բացատրել: Նույնը կրկնում է ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն. Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականությունը ճշգրտելու համար Ախ հատուկ նիստ են հրավիրում, որտեղ նա հիշեցնում է, որ Հայաստանը միացել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտին, որը ենթադրում է ՌԴ նախագահի կալանավորում եւ արտահանձնում ՌԴ թշնամի երկրներին: Մի՞թե դրանից ավելի մեծ հակառուսական քայլ կարող է լինել:

Փաշինյանը չի կարողանում խաբել հայ հասարակությանը, թե Ռուսաստանի հետ հարաբերություններում ամեն ինչ նորմալ է, խնդիրներ չկան: Ռուսաստանը շատ բացահայտ է արտահայտում իր դիրքորոշումը գործող իշխանության նկատմամբ: Ոչ միայն հայտարարություններով, այլեւ կոնկրետ գործողություններով: Մայիսի 22-ից «Ռոսսելխոզնադզորը» պաշտոնապես սահմանափակեց Հայաստանից Ռուսաստան ծաղիկի ներմուծումը: Իսկ դա հարյուրավոր ջերմատներ են, հազարավոր ընտանիքներ, որոնք ապրում են ծաղիկի գործից եկամուտ ստանալով, հարյուրավոր բեռնատարների հայ վարորդներ են, ովքեր այդ ծաղիկը տեղափոխում են Ռուսաստան, միլիոնավոր, միլիարդավոր հարկեր են: Գիտեք, թե ԵՄ-ն մեզ օգնելո՞ւ է կամ շուկա՞ է տալու, հակառակը՝ ԵՄ-ն Հայաստանի հիմնական մրցակիցն է եւ դեմ չի լինի, որ Հայաստանին դուրս մղի Ռուսաստանի ծաղկի շուկայից: Ռուսաստանի ծաղկի շուկան մոտ 1,5 միլիարդ դոլար է՝100 միլիարդ ռուբլի: Այդ շուկայի մեծ մասը զբաղեցնում են հոլանդացիները, ինչպես ուղիղ Նիդերլանդներից, այնպես էլ Էկվադորից, Քենիայից իրականացվող մատակարարումներով: Հայաստանից եւս նիդերլանդական ծաղիկ էր գնում Ռուսաստան, բայց այս ներմուծումն արգելելով՝ ՌԴ-ն չի տուժելու՝ ներմուծողների հերթ կգոյանա, Հայաստանն է տուժելու:

Մամուլում տեղեկություն կա, որ «Գազպրոմ Արմենիան» գազի սակագինը բարձրացնելու հայտ է ներկայացրել ՀԾԿՀ: Նշանակում է, որ Ռուսաստանն այլեւս մտադիր չէ Հայաստանին արտոնյալ պայմաններով գազ մատակարարել, մատակարարելու է միջազգային գներով: Սրա հետեւանքը լինելու է ինչպես էլեկտրաէներգիայի, այնպես էլ մյուս ապրանքների ու ծառայությունների գների կտրուկ թանկացումը, մարդկանց աղքատացումը: Ռուսաստանը, լավ հասկանալով մարդկանց եւ մասնավորապես հայ մարդկանց հոգեբանությունը, ասում է. ի՞նչ եք ուզում՝ վիզաների ազատականացում ԵՄ-ի հետ, թե՞ ռուսական շուկա՝ էժան գազ ու հոսանք, ցորեն, շինանյութ: Դուք որոշեք, դուք ընտրեք. ընտրությունը Հայաստանի ներկա իշխանությունների, որոնք երկիրը տանում են ԵՄ եւ, հետեւաբար, ԵԱՏՄ-ի հետ խզում, եւ այն ուժերի միջեւ է, որոնք կողմ են Հայաստանի ԵԱՏՄ անդամակցությանը: Ընդամենը մեկ շաբաթ հետո՝ մայիսի 29-ին, ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստում ՌԴ նախագահը կտա ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը սառեցնելու պրոցեսի մեկնարկը: Եթե Հայաստանը կարող է միակողմանի սառեցնել իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին, Ռուսաստանը չի՞ կարող սառեցնել Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին:

Եվ հարցն ամենեւին էլ Հայաստանի անկախությունը կամ ինքնիշխանությունը չէ, անկախ եւ ինքնիշխան լինելն առաջին հերթին նշանակում է որոշումներ կայացնել եւ առաջնորդվել սեփական պետության եւ հասարակության շահերով, ոչ թե դրսից եկած թելադրանքով, մի բան, որ 8 տարի շարունակ անում է Փաշինյանի իշխանությունը՝ ի հաշիվ Հայաստանի եւ հայ ժողովրդի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԲԱՔՎՈՒՄ ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՐԹՔԻ ՔԱՐՏԵԶՈՎ ՉՈԳԵՎՈՐՎԵՔ, ԴԵՌ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ ՉԻ ԱՐՎԵԼ

Բազմիցս անդրադարձել ենք այն իրողությանը, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության վերարտադրությունը պաշտոնական Բաքվի եւ Անկարայի սրտով է: Եթե Ադրբեջանում այդ մասին խոսում են եւ խոստովանում են «մեդիալեզվով»՝ առանձին գործիչների եւ փորձագետների մակարդակով, Ալիեւի՝ Փաշինյանի հասցեին արված որոշակի «դրական» ձեւակերպումներով, ապա Անկարան ուղիղ հայտարարել է այդ մասին, օրինակ՝ Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի արած հայտնի հայտարարությամբ: Բայց պարզվում է, որ Ադրբեջանում այդքան էլ չեն հավատում Փաշինյանի անկեղծությանը, մասնավորապես՝ տարածքային ամբողջականության երկուստեք ճանաչման եւ վերջնական խաղաղության հասնելու հարցերում:

«Ադրբեջանը վաղաժամ է ուրախանում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, այսպես կոչված, խաղաղասիրական հռետորաբանությամբ: Նրա բարձրաձայն հայտարարություններին՝ խաղաղության եւ Մոսկվայից հեռանալու մասին, դեռեւս չի հաջորդել որեւէ հիմնարար քայլ, որը ցույց կտա Երեւանի կողմից նախկին քաղաքականությունից իրական հրաժարումը»,- այս կարծիքն է հայտնել Ադրբեջանի նախկին արտգործնախարար Թոֆիգ Զուլֆուղարովը «Մինվալ պոլիտիկա»-ին տված հարցազրույցում: Նրա կարծիքով, Փաշինյանի ներկայիս գիծը մեծ մասամբ մարտավարական է, եւ ադրբեջանական լրատվամիջոցների որոշ աշխատակիցներ չափազանց շտապում են Հայաստանի վարչապետի հայտարարություններն ընկալել որպես խաղաղության վերջնական շրջադարձի ապացույց: Դիվանագետի պնդմամբ, «Հայաստանի վարչապետի հայտարարությունները պետք է գնահատվեն ոչ թե խոսքերով, այլ կոնկրետ գործողություններով՝ հիմնականում Սահմանադրության փոփոխության, տարածքային պահանջներից հրաժարվելու եւ նախկին խորհրդային հանրապետությունների վարչական սահմանները ճանաչելու հետ կապված պարտավորությունների կատարման հարցերում»: Նախկին նախարարը քննադատել է նաեւ հայկական կողմի մոտեցումը տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման հարցում: Դիվանագետի խոսքով՝ «Երեւանը փորձում է փոխադարձ ճանաչման փաստը ներկայացնել որպես բարենպաստ սահմանների վերջնական հաստատում, չնայած սահմանազատման եւ սահմանագծման գործընթացները դեռեւս ավարտված չեն»: «Նա շրջում է՝ կրծքին այս նշանը (նկատի ունի ՀՀ քարտեզով պատկերը)… Նրանք ուզում են ստանալ այս «նշանը»՝ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչումը, եւ այն ներկայացնել որպես բոլոր պահանջների վերջնական ընդունում»: Մեկնաբանելով Փաշինյանի խաղաղ հռետորաբանությունը՝ Զուլֆուղարովը կասկածանքով է մոտեցել Երեւանի եւ Մոսկվայի միջեւ հարաբերությունների ցուցադրական սառեցմանը: Նա նշել է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ առեւտրի շարունակական աճը, ռուսական ռազմական ենթակառուցվածքների պահպանումը եւ ռուսական ներկայությունը կրճատելու իրական քայլերի բացակայությունը: Դիվանագետը նաեւ խոստովանել է, որ Ադրբեջանի համար, կանխատեսելիության առումով, «անկեղծ Քոչարյանն» ավելի նախընտրելի կլիներ, քան «խորամանկ Փաշինյանը»: Բացառված չէ, որ Բաքվում սկսել են սթափ նայել իրականությանը եւ Փաշինյանի հետ կապված սառը հաշվարկներ անել՝ հետեւելով նրա քարոզարշավին, նրա հիստերիկ վարքագծին ու հռետորաբանությանը: Չի կարող հայատյաց հարեւանն իր համար բաղձալի արդյունքն անվերապահորեն կապել Փաշինյանի ու նրա իշխանության հետ, որքան էլ վերջինս կատարել եւ կատարում է Ադրբեջանի բոլոր պահանջները: Բայց նաեւ չի կարելի բացառել, որ սա թուրքական դիվանագիտության հնարքներից է՝ գովել Քոչարյանին՝ նրան վնասելու եւ Փաշինյանին անուղղակի աջակցելու համար:

Արա ԱԼՈՅԱՆ

ԿՈՉՍՈ

ԱՀԱՑԱՆԳ. ՄԻ ՁԵՌՔՈՎ ԹՈՇԱԿՆԵՐՆ ԱՎԵԼԱՑՐԻՆ, ՄՅՈՒՍՈՎ՝ ԽԵՂՃԵՐԻՆ ԶՐԿՈՒՄ ԵՆ ԹՈՇԱԿԻՑ

Ընտրություններից 2 ամիս առաջ իշխանությունները բարձրացրին թոշակները: Միաժամանակ, թոշակառուներին զրկեցին իրենց թոշակները «Հայփոստից» ստանալու իրավունքից: Թվում է, թե դրական բան են արել, քանի որ բանկային քարտերով թոշակ ստացողն ունի քեշբեք ստանալու իրավունք, իսկ «Հայփոստից» ստացողը չունի, առավել եւս, որ թոշակի բարձրացման հետ միասին այդ քեշբեքը նույնպես ավելացել է: Թոշակների եւ քեշբեքի մեծացման մասին լուրն ամենօրյա ռեժիմով գովազդվում է, մինչդեռ թոշակների ստացումը «Հայփոստից» դադարեցնելու եւ բանկեր պարտադիր տեղափոխելու որոշման բացասական հետեւանքների մասին ոչինչ չի ասվում:

Լրացնեմ այդ բացը: Հետեւանքն այն է, որ բազմահազար թոշակառուներ, հատկապես նրանք, ովքեր ամենաանպաշտպաններն ու խեղճերն են, փաստորեն, զրկվել են թոշակ ստանալու հնարավորությունից:

Բանն այն է, որ բանկային քարտով թոշակ ստացողը տարին մեկ անգամ անձնագրով անձամբ պետք է ներկայանա բանկ, որպեսզի նույնականացվի, այսինքն, ապացուցի իր մահացած չլինելու եւ Հայաստանում ներկա գտնվելու փաստը: Մինչդեռ «Հայփոստում» այդպիսի պահանջ չկար, քանի որ այդ հիմնարկի աշխատակիցը կամ փոստատարը, որը թոշակը հասցնում էր թոշակառուին, ամեն անգամ անձամբ ստուգում եւ համոզվում էր, որ թոշակառուն Հայաստանում է եւ չի մահացել: Այնպես որ, այն թոշակառուները, որոնք վատառողջ էին եւ տնից հազիվ էին դուրս գալիս կամ նույնիսկ դա էլ չէին կարողանում անել, ասենք՝ ծանր հիվանդները, այդուհանդերձ, հնարավորություն ունեին ստանալու իրենց թոշակները: Նույնը վերաբերում էր այն թոշակառուներին, որոնց բնակության վայր հանդիսացող գյուղական վայրում չկա ոչ բանկ, ոչ բանկոմատ: Վերը նշված թոշակառուների բազմությունը զրկվում էր քեշբեք ստանալու իրավունքից, բայց չէր զրկվում թոշակներից: Մայիսից իրավիճակը փոխվել է, եւ նրանց մի մասը կզրկվի ոչ միայն քեշբեքից, այլ նաեւ օրենքով իրենց հասանելիք թոշակը ստանալու հնարավորությունից:

Բանն այն է, որ, մայիսից սկսած, ոչ միայն «Հայփոստն» է դադարեցրել թոշակների վճարումը, այլ նաեւ Կենտրոնական բանկը սովորական նույնականացման մասին իր նախկին որոշումը համարել է ոչ բավարար եւ դրան գումարել է նաեւ էլեկտրոնային նույնականացման պահանջ:

Բացատրեմ, թե ինչ է դա: Թոշակառուն, նաեւ՝ գյուղում բնակվողը, արդի էլեկտրոնային սարքերից օգտվել չիմացողը, նաեւ՝ վատառողջ եւ ծանր հիվանդը ոչ միայն պետք է իր սուղ միջոցների հաշվին ձեռք բերի գուցե իր համար ոչ պետքական սմարթֆոն, այլեւ դրա մեջ պետք է ունենա էլեկտրոնային փոստի հասցե եւ կարողանա օգտվել դրանից: Եվ անձամբ ներկայանալուց, անձնագիրը ներկայացնելուց եւ հարցաթերթիկ լրացնելուց բացի, ինչը նախկին նույնականացման պահանջն էր, այժմ պետք է կատարի լրացուցիչ գործողություններ: Նա sms-ով պետք է ստանա կոդ, այդ կոդով կարողանա բացել իր էլեկտրոնային հասցեին եկած նամակը եւ այնտեղ եղած կոդը պետք է ներկայացնի իր ինքնությունը ստուգող բանկի աշխատակցին: Եվ դա պետք է անի թոշակառուն, որի մեկ ամսվա թոշակով հազիվ հնարավոր է գնել ամենաէժան սմարթֆոնը: Այսինքն, հենց այն ընտրողը, որին հեշտությամբ խաբում եւ նրա ձայնին են տիրանում իշխանության ձգտողներն ու դրան հասնողները: Որոնք, սակայն, հասկանալով վատառողջ տարեցների, հաշմանդամների պրոբլեմները, բայց ցանկանալով ստանալ այդպիսի ընտրողի քվեն, պատրաստ են տրամադրել նրան փոխադրամիջոց, ուղեկցել ընտրատեղամաս, բացատրել, թե ինչպես է պետք լրացնել քվեաթերթիկը: Մինչդեռ արդար կլիներ, որ իշխանությանը տիրանալուց հետո ոչ թե ստորացնեին թոշակառուներին՝ ստիպելով ապացուցել, որ նրանք դեռեւս շնչում են, այլ՝ եթե կասկածում են, սոցիալական ծառայությունների աշխատակիցների միջոցով ստուգեին կասկածելի համարվողներին: Նկատենք, որ այսօր եւս, հենաշարժական խնդիրներ ունեցող ընտրողները հնարավորություն ունեն փոխելու տեղամասը՝ ընտրելով այնպիսին, որը հարմարեցված է հենաշարժական խնդիրներ ունեցողների համար: Նկատենք, որ 1996 ընտրատեղամասից 621-ն այդպիսին են: Մինչդեռ, նույնիսկ նույն կատեգորիայի թոշակառուներին զրկել են իրենց թոշակը փոստատարների օգնությամբ ստանալու իրավունքից:

Ինչի է հանդիպելու «Հայփոստից» իր թոշակը ստանալու իրավունքից զրկված թոշակառուն: Եթե նա անձնագրից բացի ներկայացնի նաեւ ID քարտ, որը, ուշադրություն, հայերենով կոչվում է նույնականացման քարտ, աշխատակիցը նրան կասի, որ դա եւս բավարար չէ նույնականացման համար: Եթե նույնիսկ այդ թոշակառուի անձնագիրը լինի կենսաչափական, որի մեջ զետեղված են նրա մատնահետքերը, դա նույնպես չի համարվի բավարար: Մինչդեռ այդպիսի անձնագիրը նույնականացման համար բավարար է համարվում նույնիսկ Շենգեն գոտու երկրներ այցելելու համար:

Հետեւաբար, այդ կրկնակի նույնականացումը մոգոնած պաշտոնյաները կամ ծանոթ չեն ՀՀ թոշակառուների իրական վիճակին, կամ էլ իրենց անձն օրենսդրությամբ սահմանված կարգով դիմի կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում, եւ նրան նշանակվի կենսաթոշակ»:

Ի դեպ, նույնականացվելու կրկնակի ստուգումից բացի, անհրաժեշտ է նաեւ լրացնել ծավալուն մի հարցաթերթիկ, որի հարցերը կապ չունեն նույնականացման կամ թոշակ ստանալու քաղաքացու իրավունքի հետ: Նույնիսկ այն հարցերը կապ չունեն, թե արդյո՞ք թոշակառուն ունի Հայաստանից բացի այլ երկրի քաղաքացիություն կամ էլ՝ աշխատո՞ւմ է, թե՞ ոչ: Անկախ այդ ամենից, ՀՀ քաղաքացին, որը մշտապես կամ առավելապես բնակվում է Հայաստանում եւ չի ստանում այլ երկրի թոշակ, պետք է ստանա հայաստանյան իր թոշակը:

Նախազգուշացնենք նաեւ, որ չի բացառվում, որ ընտրություններից հետո կարող է տուժեն ընդհանրապես բոլոր թոշակառուները: Բանն այն է, որ թոշակների բարձրացման մասին որոշումը մի քանի ամիս անց կարող է հանդիպել խոչընդոտների, քանի որ այդ ավելացումը ներառված չէ այս տարվա պետբյուջեում եւ վճարվում է կառավարության պահուստային ֆոնդից: Մինչդեռ, ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, այն պետք է վճարվի պետբյուջեի միջոցներից: Բայց եթե բոլոր թոշակառուների տուժելու հարցը 100 տոկոսանոց չէ, ապա հոդվածիս մեջ նշված ամենախեղճ ու անպաշտպան թոշակառուների մի մասը հաստատ կտուժի: Այդ մարդիկ կզրկվեն ոչ միայն թոշակի ավելացումից, այլ նաեւ, փաստորեն, ընդհանրապես կզրկվեն թոշակ ստանալու իրենց իրավունքից, քանի որ ի վիճակի չեն լինի իրականացնել ԿԲ զավեշտալի կրկնակի նույնականացումը: Զավեշտալի, որովհետեւ նախկին նույնականացումը լրիվ բավարար էր քեշբեքը ստանալու համար: Իսկ եթե չինովնիկների մոտ առաջանում են կասկածներ, նրանք՝ իրենք պետք է անցկացնեն ստուգումներ եւ բացահայտեն խախտումները, այլ ոչ թե քաղաքացիներից պահանջեն ապացուցել, որ վերջիններս խաբեբաներ չեն:

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ԼՐՏԵՍԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ. ԵՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎԵԼ ԱՅՍ ԺԱՆՐԸ

Շատերս ենք հաճույքով դիտել հայտնի «Բոնդիանան» կամ այլ կինոնկարներ, որտեղ պատմվում է լրտեսների եւ հատուկ ծառայությունների աշխատանքի մասին: Պարզվում է, որ լրտեսական ֆիլմերն առանձին ժանր են համաշխարհային կինոարվեստում: Լրտեսական կինոնկարները, որպես կանոն, միավորում են մի շարք ժանրեր՝ թրիլլեր, դետեկտիվ, արկածային կինո, հոգեբանական դրամա, քաղաքական կինո:

Այս ժանրը ձեւավորվել է 20-րդ դարի հակամարտությունների ժամանակ, որպես ժամանակի պատմաքաղաքական իրականության կինոմեկնաբանություն: Ժանրի զարգացումը կապված է հատկապես սառը պատերազմի հետ: Հետախույզի կամ լրտեսի կերպարի միջոցով կինոարվեստն իր վերաբերմունքն է արտահայտել պետության հանդեպ հասարակության դիրքորոշմանը, իշխանության գաղտնի շերտերի, գաղափարախոսությունների, վախերի եւ անվտանգային հարցերի վերաբերյալ: Լրտեսական կինոնկարները՝ իրենց ողջ գրավչությամբ ու դիտարժանությամբ հանդերձ, ոչ միայն ժամանցային են, այլ նաեւ գործիք՝ քաղաքական առասպելների ստեղծման, տարածման, քարոզչության համար:

Կինոյի պատմության մասնագետներն ասում են, որ դեռ համր կինոյում կարելի է տեսնել լրտեսական կինոյին հատուկ էլեմենտներ: Գաղտնի գործակալներ, դիվանագիտական ինտրիգներ, ռազմական գաղտնիքներ ... սրանք այն թեմաներն էին, որոնք սիրում էին ռեժիսորները, եւ որոնք հաճույքով էր դիտում կինոդիտողը: Ամենավաղ նման ֆիլմերից մեկը Ֆրից Լանգի «Լրտեսները» կինոնկարն է, որն էկրան է բարձրացել 1928 թվականին: Իրական լրտեսական ֆիլմերը, սակայն, լայն տարածում են ստանում Երկրորդ աշխարհամարտի ավարտից եւ սառը պատերազմի սկսվելուց հետո՝ Արեւմուտք-ԽՍՀՄ առճակատման համատեքստում: Ժանրի պատմության մեջ հատկապես նշանակալի են 1950-70-ականների ամերիկյան եւ բրիտանական լրտեսական կինոնկարները: Այս ժանրի դասական գործը, իհարկե, Ջեյմս Բոնդի մասին կինոնկարներն են՝ հիմնված Յեն Ֆլեմինգի վեպերի վրա:

«007 գործակալի» կերպարը ձեւավորել է «հերոսական լրտեսի» ընդհանուր մոդելը: Եվրոպական եւ ամերիկյան լրտեսական ժապավենները, ի տարբերություն «Բոնդիանայի», ավելի իրատեսական էին, պատմաքաղաքական իրականությանն ավելի հարազատ: Ժանրի վրա հատկապես ազդեցություն են գործել Ջոն Լը Քարեի գործերը, որտեղ հետախուզությունը պատկերված է որպես բարոյական անորոշության, բյուրոկրատիայի եւ հոգեբանական հյուծվածության մի աշխարհ: Ժանրն ունի իր հստակ կանոնները, գլխավոր հերոսի կերպարային օրինակելի մոդելը, միջավայրի ու մթնոլորտի առանձնահատկությունները, փիլիսոփայությունն ու գեղագիտությունը, իր գաղափարախոսությունը, նաեւ՝ իր ենթաժանրերը: Ու չնայած այս ժանրի կինոնկարներն առաջին հայացքից հիմնականում պարզապես հետաքրքիր ժամանց են ապահովում կինոդիտողին, սակայն ավելի սուր աչքով դիտելիս կարելի է բացահայտել բազմաթիվ շերտեր ու ասելիք՝ մեսիջներ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՆԿԱՐԵԼԻ Է ՄԻԱԺԱՄԱՆԱԿ «ՊԱՐԵԼ 2 ՀԱՐՍԱՆԻՔՈՒՄ»

Ռուսաստանի հետ հարաբերությունները պատմական վատթարագույն մակարդակի հասցրած եւ հակառուսական կուրս որդեգրած Փաշինյանը քարոզարշավի ժամանակ գովեստի անակնկալ խոսքեր շռայլեց Պուտինի հասցեին, թեպետ նրա խոսքերին ոչ Հայաստանում, ոչ էլ, առավել եւս Ռուսաստանում, չհավատացին: Չհավատացին՝ ոչ միայն լավ իմանալով նրա էությունն ու, ինչպես ճիշտ են նկատել՝ «քաղաքական դիջեյ» լինելը, այլեւ դրանից առաջ եւ հաջորդիվ զեղումները: Նրա՝ «երկու աթոռի վրա նստելու» կամ «միաժամանակ երկու հարսանիքում պարելու» հնարքը, այդ թվում՝ նախընտրական շրջանում, հաստատ չանցավ:

Հիշեցնենք, որ վերջին ելույթներից մեկի ժամանակ Փաշինյանը վստահեցրեց, թե ՌԴ նախագահն իր ընկերն է, Հայաստանը Ռուսաստանի հետ հարաբերություններում ոչ մի կտրուկ գործողություն չի անելու, ավելին՝ խորացնելու է հարաբերությունները, որ ՌԴ-ն գերտերություն է, որին պետք է ակնածանքով վերաբերվել: Սակայն նույն անձը պնդում է, թե Սամվել Կարապետյանը ՌԴ-ի գործակալ է, Հայաստան է ուղարկվել՝ իշխանություն վերցնելու նպատակով, սակայն ունեզրկվելու է ուղարկողի կողմից (ակնարկում է Պուտինին): Նշում է, որ ընդդիմությունը կրկին ուզում է խաղաղության երաշխավորներ բերել, ովքեր արդեն իսկ դավաճանել են Հայաստանին ու Արցախին (էլի ակնարկում է Պուտինին): Պարբերաբար խոսում է հիբրիդային պատերազմի, «հինգերորդ շարասյան» ու այլ տեսիլքների մասին, որոնց Մոսկվան վաղուց սպառիչ պատասխան է տվել, բայց վերջին օրերին՝ հատկապես առավել հասցեական ու առավել վերջնագրային: Նախ, մայիսի 20-ին Փաշինյանին ու նրա իշխանախմբին Ռուսաստանից հասցվեց հերթական քաղաքական ապտակը: Հերթն այս անգամ ՌԴ ԱԽ քարտուղար Սերգեյ Շոյգուինն էր, որը կառույցի աշխատանքային հատուկ խմբի նիստում հայտարարեց՝ Հայաստանը ձեռնարկել է մի շարք գործողություններ, որոնք ակնհայտորեն անբարյացակամ են եւ չեն համապատասխանում ՌԴ-ի հետ դաշնակցային հարաբերությունների ոգուն:

Ի թիվս դրանց՝ Շոյգուն նշել է ՀՀ-ի անդամակցությունը ՄՔԴ-ին, ՌԴ քաղաքացիների արտահանձնումը երրորդ երկրներ, ռուս տնտեսվարողների պայմանների վատթարացումը, ԵՔՀ գագաթնաժողովի հարթակը՝ Ռուսաստանին սպառնալու համար Վոլոդիմիր Զելենսկուն տրամադրելը, միջազգային հարթակներում ԵՄ դիրքորոշմանը սատարելը, ՌԴ-ի հետ ոչ բարյացակամ երկրների հետ ռազմավարական գործընկեր դառնալը եւ այլն: Միաժամանակ նա փաստարկված վիճակագրություն է ներկայացրել, թե ինչ եզակի շահավետություն ունի Հայաստանը ինչպես Ռուսաստանի հետ, այնպես էլ՝ ԵԱՏՄ շրջանակում համագործակցությունից: Մոսկվայի հետ համագործակցությունը Հայաստանի տնտեսության հիմնական շարժիչ ուժն է. դժվար է վիճել այդ փաստի հետ:

«Ռուս եւ հայ ժողովուրդներին միավորում են դարավոր բարեկամության կապերը եւ ընդհանուր պատմությունը, ներառյալ օտարերկրյա զավթիչներին դիմադրությունը: Ռուսաստանի ջանքերի շնորհիվ Հայաստանը պահպանեց իր ինքնիշխանությունը 1990-ականներին. հենց Ռուսաստանի միջնորդությունն էր, որ թույլ տվեց դադարեցնել մարտական գործողությունները 2020 թվականին եւ վերադարձնել իրավիճակը խաղաղ կարգավորման»,- հավելել է ՌԴ ԱԽ քարտուղարը:

Նույն օրը ՌԴ ԱԽ հատուկ աշխատանքային խմբի նիստից հետո Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը հերքեց տեղեկություններն այն մասին, թե ռուս դիվանագետների կողմից Հայաստանի շահերի դեմ ուղղված գործողություններ են տեղի ունենում. «Վերջերս հակառուսական լրատվամիջոցը հրապարակել է իրականությանը բացարձակապես չհամապատասխանող զրպարտություն, ըստ որի՝ Հայաստանում, Երեւանում Ռուսաստանի դեսպանատունը, դրա աշխատակիցներն ու դիվանագիտական անձնակազմը, իբր, զբաղվում են Հայաստանի շահերի դեմ ուղղված անօրինական գործունեությամբ»: Գալուզինը նաեւ նշել է, որ եւ ԵՄ-ի, եւ ԵԱՏՄ-ի անդամ անհնար է լինել. Հայաստանը չի կարողանա «միաժամանակ պարել երկու հարսանիքի ժամանակ»: «Իհարկե, Մոսկվայում չեն կարող ընդունել այն գիծը, որն այսօր վարում է Հայաստանի ղեկավարությունը, որ նա կպահպանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանն այնքան ժամանակ, քանի դեռ, այսպես ասած, չի անցել Եվրոպական Միությանն անդամակցությանը: Նման մոտեցումները մեզ չեն կարող բավարարել. դրանք բացարձակապես անընդունելի են»,- նշել է բարձրաստիճան դիվանագետը: Նրա խոսքով, «Հայաստանին ԵՄ-ին ներգրավելը պոպուլիստական կարգախոս է. նույն մարտավարությունը կիրառվել է Ուկրաինայի եւ Մոլդովայի դեմ: ԵՄ ներկայացուցիչների խումբն արդեն իսկ ներկա է Հայաստանում, եւ նրանք միջամտում են երկրի ներքին գործերին»,- հավելել է նա: Ի դեպ, Գալուզինը հերքել է նաեւ Նարեկ Կարապետյանի՝ Ռուսաստանի քաղաքացիություն ունենալու վերաբերյալ լուրերը:

Հիշեցնենք. ԵՄ-ԵԱՏՄ անդամակցության անհամատեղելիության մասին ապրիլի 1-ին հայտարարեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը՝ Փաշինյանի հետ Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ: Ավելի ուշ նա հորդորեց ՀՀ իշխանություններին՝ ազնիվ լինել եւ հնարավորինս արագ կողմնորոշվել՝ քաղաքավարի «ապահարզան» ԵԱՏՄ-ի հետ, թե՞ «ամուսնություն» ԵՄ-ի հետ, եւ առաջարկեց այդ հարցով հանրաքվե անցկացնել: Տեսական հանրաքվեից առաջ, սակայն, մեծ գործ ու այլ առիթ կա. հունիսի 7-ին Հայաստանում նախանշված ԱԺ ընտրությունները կտան բոլոր հարցերի պատասխանները:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 22.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆ ԱՄԱՉԱՆԳՈՒՄ Է, ՏՆՕՐԵՆԸ՝ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ



Խմբագրություն է դիմել Հայաստանի ազգային գրադարանի աշխատակից **Տիգրան Մովսիսյանը** եւ պատմել գրադարանում տիրող վիճակի, իր հանդեպ խտրական վերաբերմունքի մասին: Նրա խոսքով, վերջին 8 տարում գրադարանին բազմաթիվ գրքեր, թերթեր են նվիրաբերվել, որոնք պահվում են նկուղներում, որտեղ գրքերի պահման պայմաններ չկան՝ խոնավ է, լցվում են անձրեւաջրեր, կոյուղաջրեր: Լուսավորություն, ջեռուցում կամ օդափոխություն չկա: «Գրքերը, ձեռագրերը եւ թերթերն այստեղ մնում են տարիներով՝ բորբոսնում, շարքից դուրս են գալիս: Այս տարի էլ անձրեւաջրերը լցվեցին հազարավոր գրքերի վրա, որոնք շարքից դուրս եկան: Նույնիսկ լրիվ նոր գրքերն են իջեցրել նկուղ, եւ այս պայմաններում դրանք արդեն ընթերցելու համար ոչ պիտանի են դարձել: Մինչդեռ գրադարանում կան ազատ տարածքներ, որտեղ հնարավոր է գրքերը պատշաճ պահել: Գրադարանում կան նաեւ կորած գրքեր, որոնք բացառիկ նմուշներով են եղել: Գիրք ունենք՝ 2 օրինակից, որի արժեքը 1 մլն դրամ է, մեկ օրինակը պահվում է անձեռնմխելի ֆոնդում, իսկ մյուս օրինակն անհետացել է գրադարանից»: Նրա խոսքով, նկուղում վնասված գրքերը տոպրակներով տեղափոխել են վերամշակման, բայց տնօրինությունն ասում է, որ դրանք ի սկզբանե վնասված են եղել. «Եթե գրքերը վնասված են եղել, ինչո՞ւ են ընդունել, սա գրադարա՞ն է, թե՞ Սովետաշենի աղբավայրը»:

Նա պատմեց նաեւ, որ գրադարանի տակ գտնվող սրճարանը տարիներ շարունակ հոսանք է գողացել, որի մասին զեկուցվել է տնօրենին, ստուգել են, փաստերով հաստատել. «Բացի այդ, նկուղներում հոսանքների շիթերը բաց, անմխիթար վիճակում են, կոյուղին ու անձրեւաջրերը բաց հոսանքի կողքն են լցվում: Սա ոչ միայն կարող է ողբերգության պատճառ դառնալ, այլ նաեւ կարող է հրդեհ առաջանալ, որի հետեւանքները եւս ողբերգական կարող են լինել: Մեկ այլ կարեւոր ու վտանգավոր խնդիր է թմրանյութերի օգտագործումը: Ես նկատել եմ բակի տարածքում ներարկիչներ, զգուշացրել եմ փոխտնօրենին, բայց ոչ մի բան չարեցին»: Տիգրան Մովսիսյանի խոսքով, աշխատակիցները նախկին տնօրենի ժամանակ պարգեւավճարներ էին ստանում՝ 10 հազար դրամ, նոր տնօրեն Աննա Չուլյանը եռամսյակային պարգեւավճարները հանել է:

Նա չարաշահում է համարում Ռալֆ Յիրիկյանի՝ գրադարանին նվիրած մեքենայի ոչ նպատակային շահագործումը. «Տարիներ առաջ Յիրիկյանը մեքենա նվիրեց, որ ընթերցել ցանկացող կույրերին գրադարան տեղափոխեն, ապա տուն ուղեկցեն, սակայն ներկա տնօրենի օրոք մեքենան նպատակին չի ծառայում: Ներկա տնօրեն Աննա Չուլյանի օրոք պատից հեռացրել են անգամ նախկին 17 տնօրենների լուսանկարները»:

Իր հետ լարված իրավիճակը սկսվել է այն ժամանակ, երբ տարիներ առաջ գրադարանի 5 աշխատակցի կատարած հավելյալ աշխատանքի համար վճարվելիք 80 հազարը ամիսներ շարունակ չեն տվել, ինքն անձամբ դիմել է նախարարություն, որից հետո վճարումն արվել է, բայց իր դեմ տնօրինությունը լարվել է: Նրա խոսքով, իր հասցեին բազմիցս հայհոյանքներ են հնչեցրել, 23 հազար դրամով կրճատել են իրեն տրամադրվող գումարը, մյուս աշխատակիցներին զգուշացրել են՝ իր հետ չշփվել: Ինքը Նիկոլ Փաշինյանին նամակ է ուղարկել, սակայն պատասխան չի ստացել:

Մեզ հետ զրույցում գրադարանի տնօրեն **Աննա Չուլյանն** ասաց. «Մենք մի հոգեկան հիվանդ աշխատակից ունենք, բազում նամակներ է ուղարկել բոլոր գերատեսչություններ, մեզ մոտ ստուգումներ են իրականացվել, ես չգիտեմ՝ նախկինում դրանք որ թվին արված լուսանկարներ են, բայց մենք պարբերաբար անցել ենք բոլոր աուդիտները, ստուգումները, եւ որեւէ խնդիր չի եղել»: Անդրադառնալով հոսանքի գողության հետ կապված մեղադրանքին, նշեց, որ հարցում են ուղարկել ՀԷՑ, եկել՝ ստուգում են արել, ունեն հետադարձ նամակ, որ որեւէ խնդիր չկա: Հարցին՝ եթե պնդում եք, որ ձեր աշխատակիցը ձեզ վարկաբեկում է, ինչո՞ւ իրավական գործընթաց չեք սկսում, Չուլյանը պատասխանեց. «Սկսված է գործընթացը, ընթացքի մեջ է... Եթե մարդը զանգում է ՄԻՊ, ասում է՝ ես ինքնահիրկիզում կանեմ, էլ ի՞նչ եք ուզում, որ ես պատասխանեմ էդ մարդուն: Ես անանուն, անհասցե ահազանգերի չեմ պատասխանում, ինչ գործընթաց անհրաժեշտ էր, արվել է, եթե խախտումներ լինեին, արձանագրված կլինեին»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am